

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ

JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2 (38)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2022

«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал «Вестник Ереванского университета. Международные отношения, Политология». Выходит три раза в год. Издаётся с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета».

Three issues of “Journal of Yerevan University. International Relations, Political Science” are published annually. The journal has been published since 2010. It is the successor of “Journal of Yerevan University” published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.

Գլխավոր խմբագիր՝ **Պետրոսյան Գեղամ** (պ.գ.դ., պրոֆ.)

Ազգյան Վահագն (պ.գ.թ., դոց.), **Ալեքսանյան Աշոտ** (ք.գ.դ., պրոֆ., պատ. քարտուղար), **Ավագյան Արսեն** (պ.գ.դ., պրոֆ.), **Բայբուրդյան Վահան** (պ.գ.դ., պրոֆ.), **Գալստյան Խաչիկ** (ք.գ.դ., պրոֆ.), **Ենգոյան Աշոտ** (ք.գ.դ., պրոֆ.), **Լեպեխին Վլադիմիր** (պ.գ.թ., Մոսկվա), **Մանուկյան Ժակ** (պ.գ.թ., դոց.), **Մարգարով Ալեքսանդր** (ք.գ.դ., պրոֆ.), **Պետրոսյան Վահրամ** (պ.գ.թ., դոց.), **Սաֆարյան Արամ** (պ.գ.թ., դոց.), **Սիլան Նիկոլայ** (պ.գ.թ., Մոսկվա), **Սիմոնյան Արամ** (պ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ), **Քեռյան Գարիկ** (ք.գ.դ., պրոֆ.)

Редакционная коллегия:

Главный редактор: **Петросян Гегам** (д.ист.н., проф.)

Աვაгյան Արսեն (д.ист.н., проф.), **Աглиян Ваагн** (к.ист.н., доц.), **Алексян Ашот** (д.пол.н., проф.б.отв. секретарь), **Байбурдян Ваан** (д.ист.н., проф.), **Галстян Хачик** (д.пол.н., проф.), **Енгоян Ашот** (д.пол.н., проф.), **Керян Гарик** (д.пол.н., проф.), **Лепехин Владимир** (к.фил.н., Москва), **Манукян Жак** (к.ист.н., доц.), **Маркаров Александр** (д.пол.н., проф.), **Петросян Ваграм** (к.ист.н., доц.), **Сафарян Арам** (к.ист.н., доц.), **Силаев Николай** (к.ист.н., Москва), **Симонян Арам** (д.ист.н., проф., член.кор. НАН РА)

Editorial Board:

Editor-in-chief: **Petrosyan Gegham** (Sc. D. in History, Professor)

Aglyan Vahagn (PhD in History, Associate Professor), **Aleksanyan Ashot** (Sc. D. in Political Science, Professor, Executive Secretary), **Avagyan Arsen** (Sc. D. in History, Professor), **Bayburdyan Vahan** (Sc. D. in History, Professor), **Engoyan Ashot** (Sc. D. in Political Science, Professor), **Galstyan Khachik** (Sc. D. in Political Science, Professor), **Keryan Garik** (Sc. D. in Political Science, Professor), **Lepekhin Vladimir** (PhD in Philosophy, Moscow), **Manukyan Jak** (PhD in History, Associate Professor), **Markarov Alexander** (Sc. D. in Political Science, Professor), **Petrosyan Vahram** (PhD in History, Associate Professor), **Safaryan Aram** (PhD in History, Associate Professor), **Silaev Nikolay** (PhD in History, Moscow), **Simonyan Aram** (Sc. D. in History, Professor, NAS RA Corresponding Member)

**ՔԱՌՅԱԿ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
(Հայաստանը Կոստանդնուպոլսի խորհրդաժողովի նախօրեին,
1918 թ. մարտ - հունիս)**

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Անդրկովկասը շարունակում էր մնալ Քառյակ միության պետությունների՝ ուժերի աշխարհաքաղաքական նոր վերադասավորումների, սուր հակասությունների, ռազմաքաղաքական ու տնտեսական շահերի բախումների կիզակետում: Հողվածում առանձնահատուկ ուշադրության է արժանացել այն հանգամանքը, որ Առաջին աշխարհամարտի տարիներին՝ Քառյակ միության պետությունների մոտալուտ պարտության շեմին, նորանկախ Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր քաղաքական ու տնտեսական խորը ճգնաժամում՝ շարունակելով մնալ օսմանյան Թուրքիայի ռազմաքաղաքական մարտավարության և դիվանագիտական փակուղիների բարդագույն հորձանուտում:

Բանալի բառեր - Հայաստանի Հանրապետություն, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա, Թուրքիա, Թիֆլիս, Բաքու, Հոլի. Քաջագունի, Համո Օհանջանյան

Առաջին աշխարհամարտի տարիներին միջազգային քաղաքական բարդ իրավիճակում Անդրկովկասում ծնունդ առած նորանկախ երեք հանրապետությունները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, շարունակում էին մնալ մեծ տերությունների՝ ուժերի աշխարհաքաղաքական նոր վերադասավորումների, սուր հակասությունների, ռազմաքաղաքական ու տնտեսական շահերի բախումների կիզակետում: Հիրավի, տարածաշրջանին տիրելու համար պայքար էր ծավալվել ոչ միայն Քառյակ միության և նրան հարող առանձին երկրների, այլ նաև Համաձայնության պետությունների (Անտանտի) ու Խորհրդային Ռուսաստանի միջև: Նրանցից յուրաքանչյուրը, բացահայտ կամ գաղտնի, պայքարում էր հանուն իր աշխարհաքաղաքական ու տնտեսական հեռահար նպատակների:

Քառյակ միության երկրների (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա, Թուրքիա) մոտալուտ պարտության շեմին նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր քաղաքական ու տնտեսական խորը ճգնաժամում՝ շարունակելով մնալ օսմանյան Թուրքիայի

ռազմաքաղաքական մարտավարության ու դիվանագիտական փակուղիների բարդագույն հորձանուտում: 1918 թ. հունիսի 3-ի Բաթումի պարտավորագրի պահանջները լուրջ խոչընդոտներ հարուցեցին Հայաստանի Հանրապետության համար Համաձայնության պետությունների և նրան հարող այլ երկրների հետ՝ ինքնուրույն և ազատ արտաքին քաղաքականություն վարելու ու դիվանագիտական հարաբերություններ հաստատելու: Բանն այն է, որ այդ պարտավորագրով Օսմանյան կայսրությունը Հայաստանի Հանրապետությանը դրել էր շրջանակների մեջ՝ թույլատրելով նրան դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնել միայն անմիջական հարևանների, դաշնակից Քառյակ միության և դրան հարող պետությունների հետ: Թեև հունիսի 4-ին Բաթումում ստորագրվել էր հաշտության դաշնագիր, սակայն օսմանյան Թուրքիան չէր բավարարվում ձեռք բերածով և շարունակում էր մնալ սպառնալիք մի փոքրիկ տարածքի վրա ամփոփված նորանկախ հայկական պետության կայացմանը: Այդ երկրի ռազմական ներխուժման վտանգն ավելի ու ավելի իրական էր դառնում, և այս անգամ արևելահայությունն էր հայտնվել ցեղասպանության ու հայրենագրկման սպառնալիքի առջև, ինչը տեղի ունեցավ Արևմտյան Հայաստանում և մյուս հայաբնակ վայրերում: Լեոն գրում էր. «Թյուրքաց Հայաստանը (Արևմտյան – Գ. Պ.) ոչնչացնելուց հետո երիտասարդ թյուրքերը ոչնչացնում էին նաև ռուսաց (Արևելյան – Գ. Պ.) Հայաստանը»¹:

Այժմ փորձենք հակիրճ ներկայացնել՝ ինչպիսի ռազմավարություն ու մարտավարություն էին որդեգրել Քառյակ միության պետությունները տարածաշրջանում Առաջին աշխարհամարտի տարիներին. ինչո՞ւ բախվեցին նրանց աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերը, ինչի հետևանքով Անդրկովկասը բաժանվեց ազդեցության ոլորտների երկու գլխավոր դաշնակիցների՝ կայզերական Գերմանիայի և օսմանյան Թուրքիայի միջև:

1918 թ. հունիսի սկզբներին Թուրքիան թեև արդեն մոտ էր պարտությանը, սակայն հետևողականորեն շարունակում էր իրագործել արտաքին քաղաքականության մեջ իր որդեգրած **համաթուրանական** ռազմավարական ու մարտավարական ծավալապաշտական ծրագրերը: Ամբողջ Արևմտյան Հայաստանը բռնազավթելուց և ապրիլին Կարսը, Արդահանն ու Բաթումը գրավելուց հետո թյուրքերը, կոպտորեն խախտելով Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի (1918 թ. մարտի 3) 4-րդ հոդվածով ամրագրված սահմաններն ու պայմանները, շարունակեցին իրենց ռազմական առաջխաղացումը՝ ներկայացնելով արդեն տարածքային նոր պահանջներ ամբողջ Անդրկովկասի, Իրանի (Պարսկաստան), Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու ժողովուրդներ-

¹ Լեոն, Անցյալից. Հուշեր, Թղթեր, Դատումներ. Հայոց հարց. Հայ հեղափոխական դաշնակցություն. Համաշխարհային պատերազմ. Հեղափոխություն, Թիֆլիս, 1925, էջ 344:

րի երկրամասերի նկատմամբ՝ ձգտելով հասնել մինչև Չինաստան:

Միանգամայն ակնհայտ է, որ անդրկովկասյան երեք հանրապետությունների անկախ գոյությունն ու յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին դաշնագրերի ստորագրումը անմիջականորեն բխում էր օսմանյան Թուրքիայի շահերից՝ իրականացնելու իր ռազմավարական և մարտավարական ծրագրերը: Այս ամենը պայմանավորված էր տարածաշրջանում առկա ներքին և արտաքին քաղաքական մի շարք նպաստավոր գործոններով, որոնք ճարպկորեն օգտագործեց օսմանյան ռազմաքաղաքական ղեկավարությունն իր ռազմատենչ ու զավթողական պլաններն իրագործելու նպատակով: Բանն այն է, որ տարածաշրջանի երեք գլխավոր ազգերի՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների միջև կուտակված ներքին և արտաքին խորը հակասություններն ու հակամարտությունները, նրանց արտաքին քաղաքական տարբեր կողմնորոշումներն ու ազգային-տարածքային սահմանային կնճռոտ վեճերը, հնուց եկող փոխադարձ անվստահությունն ու անհանդուրժողականությունը, կասկածն ու երկյուղը լայն հնարավորություն տվեցին օսմանյան ռազմաքաղաքական ղեկավարությանը էլ ավելի խորացնելու և պառակտելու Անդրկովկասյան միությունը: Անշուշտ, ստեղծված պայմաններում հնարավոր չէր տարածաշրջանում **միացյալ ուժերով ճակատ կազմել Թուրքիայի ռազմական առաջխաղացումը կանգնեցնելու համար:** Ավելորդ է ասել, որ Անդրկովկասը ի վիճակի չէր ռազմական ուժով լուրջ դիմադրություն կազմակերպել օսմանյան կանտոնավոր բանակի դեմ: Բանն այն է, որ թուրք-անդրկովկասյան պատերազմի հիմնական ծանրությունն ընկած էր հայկական զինված ուժերի վրա, ուստի այն վերածվեց թուրք-հայկական պատերազմի: Վրացիների ռազմական մասնակցությունը թուրքերի դեմ չնչին էր: Նրանք վայելում էին Գերմանիայի հովանավորությունը և դրանով ապահով զգում իրենց թուրքական ռազմական հարձակումից: Մահմեդականների դիվիզիան ընդհանրապես չէր մասնակցում ռազմական գործողություններին: Ավելին, կովկասյան թաթարները բացահայտ հայտարարեցին, որ ոչ միայն չեն կռվելու ցեղակից թուրքերի դեմ, այլև անվերապահորեն աջակցելու են նրանց: Նրանք թուրքերի հաղթանակն ու ռազմական տարածքային զավթումները համարում էին իրենց ազգային-քաղաքական ձգտումների իրականացում²: Ի դեպ, օսմանյան գորամասերը, օգտվելով միացյալ ուժերով հակաթուրքական ճակատ ստեղծելու անհնարինությունից և ռազմաճակատի անպաշտպանությունից, լայնածավալ ռազմական գործողություններ սկսեցին Մարդարապատի, Ղարաբաղի սայի և Բաշ-Ապարանի ուղղությամբ, որտեղ նրանց դիմագրավեց թշնամու դեմ մեն-մենակ մնացած հայ ժողովրդի միասնական կամքը:

Միանգամայն ակնհայտ էին նաև **անդրկովկասյան երեք անկախ հանրապետությունների արտաքին քաղաքական տարբեր կողմնորո-**

² Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 200, ց. 2, գ. 19, թ. 14:

շումները: Վրացիները որդեգրել էին գերմանական, իսկ կովկասյան թաթարները անվերապահորեն թուրքական կողմնորոշում, սակայն երկուսն էլ վարում էին բացահայտ հակառուսական քաղաքականություն: Հասկանալի է, որ հայերի արտաքին քաղաքական դիրքորոշումն արմատականորեն տարբեր էր. նրա ավանդական կողմնորոշումը ռուսականն էր: «Նա (հայ ժողովուրդը - Գ.Պ.) շատ լավ ըմբռնում էր, որ իր համար ամենախրականը, - գրում է Լեոն, - ռուսական օրիենտացիան է և որ առանց Ռուսաստանի չէր կարող գտնել հանգստություն իր պատմական հայրենիքում: Հենց այդ պատճառով էլ վրացիներն ու թուրքերն ասում էին հայերին»³: Փաստորեն, անդրկովկասյան գլխավոր ազգերից յուրաքանչյուրը գործում էր հանուն սեփական շահերի, ուստի չկարողացավ ժամանակին արագ և ճիշտ կողմնորոշվել օսմանյան Թուրքիայից սպասվող նոր դավադրությունների սարդոստայնում: **Դժվար չէ նկատել նաև, որ այդ ամենի պատճառով անկարելի էր դառնում անդրկովկասյան միասնական արտաքին քաղաքականություն և ձկուն դիվանագիտություն վարելը:**

Թուրքիան, օգտվելով երկրամասում ստեղծված իր համար նպաստավոր պայմաններից, միաժամանակ ռազմական տարածքային զավթումներով, սպառնալիքներով և բարոյահոգեբանական ու դիվանագիտական ճնշումներով, առանց իր դաշնակիցներ Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի հետ համաձայնեցնելու*, 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Անդրկովկասի երեք նորանկախ հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին ստորագրեց միայն իր պահանջները բավարարող հաշտության դաշնագրեր: Դրանով Օսմանյան կայսրությունը իրականում լայն հնարավորություն էր ստանում վերջնականապես սպառնալիքներով իր ռազմաքաղաքական և տնտեսական ազդեցությունն ամբողջ տարածաշրջանում: Բանն այն է, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի և դրան կից լրացուցիչ արձանագրությունների հիման վրա օսմանյան Թուրքիային անցնելիք տարածքների և երկաթուղագծերի մաքրումն ու հանձնումը սկսվել էին **դաշնագիրը ստորագրելուց անմիջապես հետո**, մինչդեռ դրա ամբողջական վավերացումը պիտի կատարվեր Կոստանդնուպոլսում մեկամսյա ժամկետում⁴: Փաստորեն, այդ **դաշնագրով օսմանյան Թուրքիան լայն հնարավորություն էր ստանում հայկական տարածքներով, կարճ ճանապարհներով արագ թափանցելու** Կովկաս, Բաքու, Միջին Ասիա և ավելի հեռուներ: «Թուրքիան, - գրում է Ա. Խաչատրյանը,- նոյնիսկ հակառակ զինակցու-

³ Լեոն, նշվ. աշխ., էջ 365:

* Ըստ 1916 թ. սեպտեմբերի 28-ի՝ Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքված դաշնագրի՝ կողմերը պայմանավորվել էին չկնքել առանձին դաշնագրեր այլ երկրների հետ առանց կողմերի փոխադարձ համաձայնության, տե՛ս The Middle East and North Africa in World Politics: A Documentary Record - British-French Supremacy, 1914-1945, Yale University Press, 1979, էջ 73-74:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 6:

թեան մէջ սովորաբար ընդունուած քաղաքավարութեան՝ առանց իր զինակիցներու մասնակցութեան, անջատ հաշտութեան բանակցութեան սկսեր էր Կովկասեան ժողովուրդներէ կազմուած հանրապետութեան հետ: Նախապէս, ինչպէս կ'ըսէր Պոլսի Բուլգար դեսպանը, խաբեր էր իր զինակիցներն, ըսելով՝ թէ Կովկաս յանձնախումբ կը դրկէ՝ տեղին վրայ ծանօթանալու Կովկասի գործերու հետ և ոչ թէ դաշնագրութիւն կնքելու: Վերջը, սակայն, հակառակ անոնց կամքին, ներքին դաւերով պառակտելով այս միութիւնը, իւրաքանչիւրի հետ կնքեց իր պահանջներուն միայն բաւարարութիւն տուող դաշնագրութիւն»⁵:

Այսպիսով, **Թուրքիան երեք անկախ հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին միայն իր պահանջները բավարարող հաշտության դաշնագրերի ստորագրումը դիտարկում էր որպէս հուսալի պատնէշ, բուֆեր՝ իր անվտանգությունը ապահովելու Ռուսաստանից, որը ոչ հեռավոր ապագայում կարող էր իրական սպառնալիք դառնալ իր համար:** Ինչպէս նշում է Ալ. Խատիսյանը, «Տաճիկների (թուրքերի – Գ. Պ.) համար **անկախ Կովկասը** մի բաղձալի պատնէշ մըն էր Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ»⁶: Փաստորեն, այդ մարտավարությունը Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական կարևորագույն հանրագումարներից մեկն էր՝ պաշտպանվելու ռուսական վտանգից:

Այնպէս որ օսմանյան Թուրքիայի համար ստեղծվում էին ռազմաքաղաքական նպաստավոր նոր պայմաններ՝ Երևան-Զուլֆա երկաթգծով շարժվելու դեպի Բաքու, Կարս - Մուրմալու - Նախիջևան - Զանգեզուր (Սյունիք) - Ղարաբաղ (Արցախ) առանցքով ներթափանցելու Իրան, միջինասիական երկրներ՝ համաթուրանական ծրագրերն իրականացնելու համար:

Ի վերջո, օսմանյան Թուրքիան սպառնում էր նաև տարածաշրջանում ավագ և հզոր դաշնակից կայզերական Գերմանիայի ռազմաքաղաքական և տնտեսական շահերին: Հովհ. Քաջագնունու գնահատմամբ՝ «Նրանք դաշնակիցներ են, բայց միևնույն ժամանակ նաև մրցակիցներ և այն էլ շատ խանդոտ մրցակիցներ: Նրանք ուշադրությամբ հետևում են իրար, և նրանցից յուրաքանչյուրի փոքր-ինչ շեղումը առաջ էր բերում մյուսի բողոքը»⁷: Թուրքիան փակում էր Գերմանիայի ճանապարհը՝ ներթափանցելու Մերձավոր Արևելք, և միաժամանակ զրկում տարածաշրջանի՝ վերջինիս խիստ անհրաժեշտ բնական հարստություններից օգտվելու հնարավորությունից: **Գերմանիային Անդրկովկասում ռազմաքաղաքական խնդիրներից ոչ պակաս հետաքրքրում էր տնտեսականը:** 1918 թ. հուլիսի 26-ին Բեռլինում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Համո Օհանջանյանը պաշտո-

⁵ Ա. Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2010, էջ 114:

⁶ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, փետրվար, էջ 110-111:

⁷ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 12:

նական Երևանին հաղորդում է (ըստ Գերմանիայի ներկայացուցիչ գործակար օ. ֆոն Լոսովի բացատրության). **«Գերմանիան Հայաստանով շատ ավելի քիչ է հետաքրքրված, քան Վրաստանով՝ թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական տեսակետներից:**

Քաղաքականապես Վրաստանը շատ ավելի է շահագրգռում Գերմանիային, քան Հայաստանը, իբրև ավելի առաջ գնացած միջազգային իրավունքի տեսակետից և նրան կարելի է հաշվի առնել իբրև արդեն կազմված պետություն իր որոշ սահմաններով, իր երկաթուղու գծով, իր կերտսինտպրովոդով, մարզանեցով և ծովային նավահանգստով: Վրաստանին նրանք արդեն նույնիսկ փոխառություն են տվել. իսկ Հայաստանը իր դեռ բոլորովին չպարզված սահմաններով, ընկած Ադրբեջանի և Վրաստանի մեջտեղը, իր անորոշ քաղաքականությամբ, իր չպարզված տնտեսական հնարավորություններով՝ այնքան էլ կարևորություն չի ներկայացնում Գերմանիայի համար օգտագործելու տեսակետից և մնում է միայն մեր խնդրի բարոյական կողմը, պատասխանատվությունը հայկական հարցի վերաբերյալ»⁸ (այս և հետագա ընդգծումները մերն են – Գ. Պ.): Ի վերջո, Գերմանիայի քաղաքական և տնտեսական շահերն անհրաժեշտաբար նրան մղեցին իր հովանավորության տակ առնելու Վրաստանը:

Ամենին էլ պատահական չէր, որ տարածաշրջանում օսմանյան Թուրքիայի վարած այդ քաղաքականությունը առաջ բերեց Գերմանիայի խորը գայրույթը: Վերջինս որոշեց չափավորել թուրքերի չափից ավելի ախորժակը և թույլ չտալ խախտել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով ամրագրված սահմաններն ու պայմանները: Ակնհայտ է, որ երկրամասի երկաթուղային ցանցը խիստ անհրաժեշտ էր պատերազմող կողմերից յուրաքանչյուրին և դրանցից որի ազդեցության ուղորտում հայտնվեր՝ նպաստելու էր այդ երկիրն ուժեղացնելուն: Թեև գերմանացիներին Արևելյան Հայաստանը տնտեսապես և քաղաքականապես չէր հետաքրքրում, սակայն այդ տարածքով էր անցնում երկրամասի երկաթուղային հանգույցի մի մասը, որտեղ բախվում էին Թուրքիայի և Գերմանիայի ռազմաքաղաքական ու տնտեսական շահերը: Դրանից ելնելով՝ գերմանացիները համապատասխան խոստումներ էին տալիս՝ «աջակցելու» Հայաստանի Հանրապետությանը: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը և քաղաքական իրադարձություններն ու դիվանագիտական բանակցային գործընթացները, Գերմանիայի աջակցությունը իրատեսական չէր: Ինչպես վերը նշվեց, կայգերական Գերմանիային Արևելյան Հայաստանը տնտեսապես և քաղաքականապես չէր հետաքրքրում, հետևաբար նրան ձեռնտու չէր հանուն հայերի վտանգել և խորացնել առանց այն էլ լարված հարաբերությունները դաշնակից Թուրքիայի հետ:

⁸ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 657, թ. 145:

Այսպիսով, դժվար չէ նկատել, թե ինչու երկրամասում բախվեցին երկու գլխավոր դաշնակիցների՝ Թուրքիայի և Գերմանիայի աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերը: Գերմանիայի շահերն անհրաժեշտաբար վերջինիս մղեցին իր հովանավորության տակ առնելու Վրաստանը: Գերմանիան պահանջեց Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունից դադարեցնել տարածաշրջանում ռազմական առաջխաղացումն ու տարածքային բռնագավթումները և բանակցային սեղանի շուրջ նստել երկրամասի ներկայացուցիչների հետ:

Նրա ճնշմամբ 1918 թ. ապրիլի 27-ին Կոստանդնուպոլսում կնքվեց գերմանա-թուրքական գաղտնի դաշնագիր, որով Անդրկովկասը բաժանվեց ազդեցության ոլորտների օսմանյան Թուրքիայի և կայզերական Գերմանիայի միջև: Ըստ դաշնագրի՝ Օսմանյան կայսրությանն էին անցնում Անդրկովկասում նրա գրաված գրեթե բոլոր հայկական տարածքները, ինչպես նաև Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին և Ադրբեջանը: Անդրկովկասի մնացած տարածքները, մասնավորապես Վրաստանը, անցնում էին Գերմանիայի ազդեցության ոլորտ: Պատահական չէր, որ Գերմանական դրոշը արդեն ծածանվում էր Վրաստանում⁹: Իսկ դա հանգիստ չէր տալիս Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությանը, հակասում էր իր աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերին տարածաշրջանում: Ի պատասխան դրան՝ նույն օրը՝ ապրիլի 27-ին, գերմանա-թուրքական դաշնագիրը շրջանցելու նպատակով օսմանյան Թուրքիան գաղտնի դաշինք կնքեց մուսավաթականների հետ, որով բացվում էր թուրքերի ճանապարհը դեպի Բաքվի նավթը և Թուրքեստանի բամբակը և այլն:

Ահա այսպիսի չափազանց բարդ ու լարված ռազմաքաղաքական իրադրությունում հունիսի վերջին Կոստանդնուպոլսում իր աշխատանքն էր սկսելու Քառյակ միության պետությունների և այլ երկրների ու կովկասյան նորանկախ հանրապետությունների դիվանագիտական ներկայացուցիչների կողմից գումարվելիք խորհրդածողովը, որտեղ ի սկզբանե ուրվագծվելու էին նրանց շահերի անխուսափելի նոր բախումները:

Փաստորեն, հունիսին Կոստանդնուպոլսում գումարվելիք խորհրդածողովով սկսվելու էր նաև հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների նոր փուլ: Լ. Շանթի բնորոշմամբ՝ «Թուրքերի՝ մեր հանդեպ անկեղծ վերաբերմունքի հետ հույս տածելը մեզ համար խելահեղություն կլինի: Այս ամենը ոչ այլ ինչ է, եթե ոչ կատակերգություն, և հայը շատ լավ գիտի, որ այն, ինչն այս պահին ինքն է անում, ևս սոսկ կատակերգություն է, որը պահանջել են հանգամանքները:

Անձամբ ես կարծում եմ, որ այս խաղը չի կարող վճռորոշ ընթացք ստանալ, նույնիսկ առերևույթ կնքված հաշտությունը չի կարող վերջ-

⁹ Տե՛ս ՆԱՍ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 12:

նական լինել, որովհետև մեր և թուրքերի շահերը տրամագծորեն հակադիր են: Հաշտության կոնֆերանսի այս կատակերգությունը տեղի է ունեցել նախ՝ Տրապիզոնի և Բաթումի, այնուհետև՝ Բաթումի և Կոստանդնուպոլսի միջև ու ներկայումս կտեղափոխվի Կոստանդնուպոլսից Բեռլին, իսկ այս վերջին մայրաքաղաքից կրկին Կովկաս: Այսպես, հաջորդաբար, մինչ այն, երբ մեր պայքարի շարունակությանը զուգընթաց, վրա է հասնում վերջապես գերմանացիների պարտությունը և համաշխարհային մեծ կոնֆերանսը»¹⁰:

Ինչպես վերը նշվեց, հունիսի 4-ին օսմանյան Թուրքիան Բաթումում անդրկովկասյան նորանկախ երեք հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին ստորագրեց հաշտության դաշնագրեր: Հայ-թուրքական «հաշտության և բարեկամության» դաշնագրի վերջին 14-րդ հոդվածն արձանագրում է. «Դաշնագիրը կվավերացվի, և վավերացված օրինակների փոխանակումը կկատարվի Կ.Պոլսում, մեկ ամսվա ընթացքում կամ ավելի վաղ, եթե դա հնարավոր կլինի: Այն ուժի մեջ կմտնի այդ փոխանակման օրից»¹¹:

Չետնաբար՝ հուլիսի 4-ին լրանում էր Թուրքիայի մայրաքաղաքում Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի ու Ադրբեջանի հետ ստորագրված Բաթումի հաշտության դաշնագրերը վավերացնելու համար սահմանված մեկամսյա ժամկետը: Դրանով Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարությունը ձգտում էր իրավականորեն ամրագրել իր տարածքային բռնազավթումները տարածաշրջանում:

Չունիսի 25-ին Գերմանիայի ռազմաքաղաքական ղեկավարության նախաձեռնությամբ Կոստանդնուպոլսում հրավիրվելիք խորհրդածոդովում¹² նախատեսվում էր վերադառնալ այդ դաշնագրերի դրույթների վերաքննարկումներին, թուրք-կովկասյան տարածքային և սահմանային առկա բոլոր խնդիրների համատեղ լուծումներին, որոնք «կապված են միմյանց հետ»¹³: Խորհրդածոդովին մասնակցելու էին Քառյակ միության պետությունների և Կովկասյան նորանկախ հանրապետությունների (Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի Լեոնականների) ղիվանագիտական ներկայացուցիչները: Կայզերական Գերմանիայի ղեկավարությունն անհրաժեշտ համարեց խորհրդածոդովին հրավիրել նաև Խորհրդային Ռուսաստանին՝ որպես Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը ստորագրող կողմի: Այդ ղիվանագիտական քայլն ուներ մարտավարական նշանակություն: Դրանով Գեր-

¹⁰ «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918)», հատոր II, աշխատասիրությամբ Ա. Պեյլերյանի, թարգմ. ֆրանս. Վ. Պոդոյանի, Եր., «Հայաստան» («Գրական հայրենիք»), 2005, էջ 330:

¹¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 6:

¹² Տե՛ս «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Հայաստանի ազգային արխիվ, Եր., 2009, էջ 177:

¹³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 13, թ. 1:

մանիայի կառավարությունն ակնարկում էր, որ առանց Խորհրդային Ռուսաստանի մասնակցության և համաձայնության հնարավոր չէ խորհրդաժողովում վճռել ռուսական նախկին տարածքների վերաբերող որևէ կնճռոտ հարց: Բացի այդ, ՌԽՖՍՀ-ի պատվիրակության մասնակցությունը կարող էր չափավորել թուրքերի չափից ավելի մեծ պահանջները¹⁴:

Առաջ անցնելով նշենք, որ այդ վավերացումների հարցը դիվանագիտական ճանապարհով լուծելու այլընտրանք չկար, ուստի դաշնագրերն ուժի մեջ չմտան: Հարց է ծագում՝ ինչո՞ւ, և որո՞նք էին այդ մարտավարության հիմնական դրդապատճառներն ու հետևանքները: Փորձենք պատասխանել այդ հարցերին:

Ինչպես նշեցինք, Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական կառավարությունը, կոպտորեն խախտելով 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով ամրագրված սահմանները և պայմանները, առանց իր դաշնակիցների հետ համաձայնության ու մասնակցության, հունիսի 4-ին Բաթումում անդրկովկասյան երեք նորանկախ հանրապետություններից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին ստորագրել էր բացառապես իր պահանջները բավարարող դաշնագրեր՝ առաջացնելով Քառյակ միության պետությունների խորը զայրույթը: Բանն այն էր, որ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը կոպտորեն խախտելու հետևանքով Անդրկովկասից բռնազավթված կենսունակ տարածքների 28,6 տոկոսը, որը կազմում էր 38 հազար քառակուսի կիլոմետր՝ 1 միլիոն 250 հազար ազգաբնակչությամբ¹⁵, Օսմանյան կայսրությունն ամրագրել էր Բաթումի հաշտության դաշնագրերում, ինչն անհամատեղելի էր և հակասում էր տարածաշրջանում իր դաշնակիցների աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերին: Եվ բնավ էլ պատահական չէ, որ այդ ամենն ունեցավ իր տրամաբանական հակազդեցությունը Կոստանդնուպոլսում հրավիրվելիք դիվանագիտական բանակցային գործընթացներում:

Հունիսի 26-ին Օսմանյան կայսրության մայրաքաղաքում Գերմանիայի հավատարմագրված դեսպան Իռեան Բերնսդորֆը Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանի և Ալ. Խատիսյանի (անդամ) հետ հանդիպման ժամանակ հայտնել է. «**Այդ խնդիրը** (դաշնագրերի վավերացումը – Գ. Պ.) **պետք է առայժմ թողնել**

¹⁴ Տե՛ս **Микаел Тумаян**, Дипломатическая история Республики Армения (1918-1920 гг.), Ер.: Национальный архив Армении, 2012, էջ 47-48:

¹⁵ Տե՛ս **Д. Завриев**, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси. 1947, էջ 70-71, տե՛ս նաև՝ **Ե. Սարգսյան**, Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Եր., 1994, էջ 56-57: Ի դեպ, Երևանի նահանգից Օսմանյան կայսրությանը փաստացի անցան Սուրմալուի ողջ գավառը, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների մեծ մասը և Երևանի ու Շարուր-Դարալագյազի գավառների փոքր մասը: Նորանկախ Հայաստանի Հանրապետության տարածքը կազմելու էր մոտ 11 հազար քառակուսի կիլոմետր, տե՛ս **Ե. Սարգսյան**, նշվ. աշխ., էջ 56-57:

բաց, քանի որ Կ. Պոլսի կոնֆերանսը Բաթումի բանակցությունների շարունակությունն է»¹⁶: Իսկ ի՞նչ նկատի ուներ Ի. Բերնսդորֆը, երբ նշում էր՝ «Կ. Պոլսի կոնֆերանսը Բաթումի բանակցությունների շարունակությունն է»: Ըստ էության, խորհրդաժողովի քննարկման հիմքում դրվելու էր Բրեստ-Լիտովսկի և Բաթումի հաշտության դաշնագրերի դրույթները դիվանագիտական ճանապարհով վերանայելու և փոփոխելու հարցը: Գերմանիան և Ավստրո-Հունգարիան Կոստանդնուպոլսում հավատարմագրված իրենց դեսպաններին և ներկայացուցիչներին հանձնարարել էին հրավիրվող խորհրդաժողովում համախորհուրդ ջանքեր գործադրել, ինչպես վերը նշվեց, վերաքննելու և փոփոխելու Բաթումի հաշտության դաշնագրերը, որոնք անհամատեղելի էին իրենց շահերին ու նպատակներին, ճնշում գործադրել Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարության վրա՝ կատարելու վերջինիս կողմից կատարեն խախտված Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրում արձանագրված սահմանները և պայմանները: Ի վերջո, նպատակ էր դրվել չվավերացնել անդրկովկասյան նորանկախ հանրապետությունների և Թուրքիայի միջև տարածքային այն սահմանագատումը, որն ամրագրվել էր Բաթումի հաշտության դաշնագրերի համապատասխան հոդվածներում և դրանց կից լրացուցիչ արձանագրություններում¹⁷:

Այսպիսով, Կոստանդնուպոլսում հրավիրվելիք խորհրդաժողովում Գերմանիան և Ավստրո-Հունգարիան դաշնակից օսմանյան Թուրքիային ներկայացնում էին հետևյալ հիմնական պահանջները.

1. Վերափոխել Բաթումի հաշտության դաշնագրերը, հրաժարվել դրանց վավերացումներից:

2. Ճանաչել 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով ամրագրված սահմանները և պայմանները: (Ի դեպ, 1918 թ. մարտին Տրապիզոնի թուրք-անդրկովկասյան բանակցությունների ժամանակ թուրքական կողմն ինքն էր պահանջում անդրկովկասյան պատվիրակություններից անվերապահորեն կատարել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրով ամրագրված պահանջները¹⁸.)

3. Տեղակայված թուրքական զորքերը ետ քաշել գրավված կովկասյան տարածքներից մինչև Կարս, Արդահան, Բաթում հաշտության դաշնագրով ամրագրված սահմանները:

4. Դադարեցնել տարածաշրջանում թուրքական շարունակվող ռազմական ներխուժումներն ու տարածքային բռնազավթումները և այլն:

Մակայն այդ պահանջները թուրք դիվանագետների համար ընդունելի չէին, ուստի բացահայտորեն մերժվեցին: «Եթե Գերմանիան ա-

¹⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 13, թ. 4:

¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 13, թ. 1, 4:

¹⁸ Մանրամասն տե՛ս Գ. Պետրոսյան, Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար – 1918 թ. հունիս), Եր., 2018, էջ 39-76:

սոր համար կոնֆերանս կը հրաւիրէ՝ թուրքերու համար պետք չէ: Այդպէս Թուրքիան, - գրում է Ա. Խաչատրյանը, - նախապէս կարևորութիւն չտուաւ այս պահանջներուն, սակայն պատերազմի անողոք դարձուածքները եկան զինք բռնադատելու՝ համաձայնութեան մը գալ իր «մեծ դաշնակցի» հետ»¹⁹:

Կարևոր է արձանագրել, որ ռազմաքաղաքական իրադարձությունները զարգացան այնպէս, որ Կոստանդնուպոլսում գումարվելիք խորհրդաժողովը օրեր, շաբաթներ շարունակ հետաձգվում էր ու այդպէս էլ չկայացավ: Հարց է ծագում՝ ինչո՞ւ: **Առաջին պատճառը.** դաշնակիցներ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի վերը նշված հիմնական պահանջների կատարումից հրաժարվելու նպատակով Օսմանյան կայսրությունը որդեգրեց խորհրդաժողովի գումարումը ձգձգելու դիվանագիտական մարտավարությունը: **Երկրորդ պատճառը** տարածաշրջանում Քառյակ միության պետությունների միջև գոյություն ունեցող հակասություններն էին, շահերի բախումները. ներքին տարաձայնություններն ու անհամաձայնություններն աստիճանաբար ավելի ու ավելի էին սրվում՝ պայմանավորված գերմանա-թուրքական տարբեր խմբավորումների ռազմական նոր անհաջողություններով ու Առաջին աշխարհամարտում նրանց մոտալուտ պարտությամբ: Ալ. Խատիսյանը հետագայում գրում է. «Պատերազմի մեծ ճակատներուն վրա, տեղի կունենար ճակատագրական բեկումը: Պատերազմի բախտը կը դաւաճանէր Գերմանիոյ եւ իր զինակիցներուն»²⁰, «Որքան անելի կը մեծնային այդ անհաջողութիւնները, այնքան անելի թուրքերը ու գերմանացիները կը խուսափէին կոնֆերանսի մասին խօսելէ»²¹: Դիվանագիտությունը այլևս անգոր էր կանխելու իրադարձությունների արագ ընթացքը: Փաստորեն, ստեղծված ռազմաքաղաքական նոր իրադրությունում **խորհրդաժողով գումարելն այլևս ընդունելի չէր նաև դաշնակից Գերմանիայի համար:** Եվ ամենևին էլ պատահական չէր, որ վերջինս հարկադրաբար հրաժարվեց այդ դիվանագիտական մարտավարությունից: Այդպէս Կոստանդնուպոլսի խորհրդաժողովի գումարումը կորցրեց իր օրախնդիր լինելու իմաստը և վերջնականապէս ձախողվեց:

Բայցևայնպէս, քննարկման ենթակա մի շարք կարևորագույն ու հիմնական հարցեր, որոնք պետք է արծարծվէին խորհրդաժողովում, քննարկման նյութ դարձան Քառյակ միության պետությունների և հրավիրված տարբեր պատվիրակությունների ներկայացուցիչների՝ Կոստանդնուպոլսում, Բեռլինում, Վիեննայում և այլ քաղաքներում մասնավոր բազմաթիվ հանդիպումների և դիվանագիտական բանակցությունների ժամանակ:

¹⁹ Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 116:

²⁰ «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1924, դեկտեմբեր, էջ 108:

²¹ Նույն տեղում, էջ 101:

Անկասկած, մասնավոր հանդիպումներում և բանակցային գործընթացներում Հայկական հարցը պետք է լուծվեր նույն տրամաբանությամբ՝ քաղաքական ու դիվանագիտական հակասությունների ու շահերի բախումների իրողությունների մեջ: Դժվար չէ նկատել, որ առջևում սպասվում էին նոր փորձություններ ու ծանր օրեր հայկական պատվիրակությունների դիվանագիտական բարդ պայքարի հորձանուտում:

ГЕГАМ ПЕТРОСЯН – Конфликт интересов государств Четверки в Закавказье (Армения накануне Константинопольской конференции, март-июнь 1918 г.). – В статье подробно освещается, что Закавказье продолжало оставаться средоточием новых геополитических перестановок сил, острых противоречий, столкновений военно-политических и экономических интересов государств «четверки». Особое внимание было обращено на то, что накануне неминуемого поражения «четверки» в ходе Первой мировой войны новонезависимая Республика Армения оказалась в глубоком политическом и экономическом кризисе, продолжая оставаться в тяжелейшем водовороте военно-политической тактики и дипломатическом тупике османской Турции.

Ключевые слова: Закавказье, геополитические перестройки, политические интересы, глубокий кризис, дипломатический тупик, Первая мировая война

GEGHAM PETROSYAN – Conflict of Interests of the Central Powers in Transcaucasia (Armenia on the eve of the Constantinople Conference, March-June 1918). – The article covers in details that the Transcaucasia continued to be the focus of new geopolitical realignments of forces, sharp contradictions, conflicts of military-political and economic interests of the Central Powers. Particular attention was paid to the fact that on the eve of the imminent defeat of the Central Powers during the First World War, the newly independent Republic of Armenia found itself in a deep political and economic crisis, continuing to remain in the most difficult vortex of Ottoman Turkey's military-political tactics and diplomatic impasses.

Key words: Transcaucasia, geopolitical restructuring, political interests, deep crisis, diplomatic impasse, World War I

**ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՄԱՆ
ՀՐԱՄԱՅՈՒՄՆԵՐԸ**

ՄԱՐՈՒԹ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Հոդվածում դիտարկվում է ռուս-ուկրաինական հակասությունների առաջացման պատճառները և այն լուսաբանվում է համաշխարհային աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում: Ուկրաինական ճգնաժամը սասանեց միջազգային հարաբերությունների համակարգը: Բացահայտվում է ռուս-ուկրաինական հակամարտության խորացման գործընթացում համաշխարհային կենտրոնների շահագրգռվածությունը: Այդ հակամարտությունը ներկայացված է գլոբալ գերիշխանությունը պահպանելու ամերիկյան ռազմավարության և համաշխարհային տնտեսության տեխնոլոգիական մի տնտեսաձևից որակական նոր կացութաձևի անցման համատեքստում:

Հայաստանի Հանրապետության առջև ծառայած մարտահրավերների տեսանկյունից լուսաբանվում են այդ հակամարտության հետևանքները, ինչպես նաև հիմնավորվում է ձևավորված տարածաշրջանային նոր իրականության պայմաններում արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացիայի անհրաժեշտությունը:

Բանալի բառեր – *Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստան, ԵՄ, Ջր. Բժեզինսկի, Հ. Քիսինջեր, հակամարտություն, գլոբալ գերիշխանություն, դիվերսիֆիկացիա*

Ռուս-ուկրաինական երկարատև դիմակայությունը 2022 թ. փետրվարի 22-ին թևակոխեց ռազմական փուլ: Ինչո՞ւ երբեմնի եղբայրական պլավոն ժողովուրդները դարձան անհաշտ հակառակորդներ, և հանուն ի՞նչ արժեքների են նրանք այսօր զոհաբերում իրենց զավակներին: Արդեն պարզ երևում է, որ ռուս-ուկրաինական ռազմական ընդհարումը իրականում պատերազմ է Ռուսաստանի և Արևմուտքի միջև, հետևաբար այդ հակամարտության բնույթը կարելի է ավելի ճշգրիտ լուսաբանել բացառապես աշխարհաքաղաքականության տեսանկյունից: Դա Ծովային (Արևմուտք) և Ցամաքային (Հարթլենդ, Ռուսաստան) ուժերի դարավոր պայքարի հերթական փուլն է: Քաղաքական տեսանկյունից երկրների մի մասը հակված է դեպի Ծովային ուժը, իսկ մյուս մասը՝ առավել պահպանողական Ցամաքային ուժը: Երբեմն աշխարհաքաղաքական այդ սահմանները անցնում են որոշ պետություններով, և դրանք

դարձնում առավել խոցելի արտաքին ուժերի համար: Ուկրաինական ողբերգությունն այն է, որ այդ սահմանը անցնում է այդ երկրի կենտրոնով. Ղրիմը և հարավ-արևելքը հակված են դեպի Ցամաքային ուժը, իսկ արևմտյան և կենտրոնական որոշ շրջաններ՝ դեպի Ծովային ուժը: Այս հանգամանքը պատճառ դարձավ ուկրաինական պետականության թուլացման և քաղաքացիական պատերազմի: Առճակատումն ուժեղացավ 2014 թ.-ից, երբ իշխանությունն անցավ արևմտամետ ուժերին, որոնց ձեռնարկած քայլերը Ղրիմում և Ուկրաինայի արևելքում հանդիպեցին բացահայտ դիմադրության, որն էլ հանգեցրեց Ղրիմի անջատման և ռազմական առճակատման:

Մոլորակը նման աղետների առջև կանգնում է, երբ մարդկությունը տեխնոլոգիական մի տնտեսաձևից անցում է կատարում նոր կացութաձևի, որի ընթացքում տնտեսությունը ենթարկվում է կառուցվածքային առումով որակական նոր փոփոխությունների. միջազգային հարաբերությունների համակարգում տեղի են ունենում լուրջ ցնցումներ, փլուզվում է հին մոդելը, ձևավորվում է նոր աշխարհակարգ, որը որպես կանոն ուղեկցվում է նոր արյունահեղ բախումներով, իսկ համաշխարհային գերիշխանության համար պայքար է մղվում նախկին և նոր ուժային բևեռների միջև: Նման պատերազմների արդյունքում են ձևավորվել Վեստֆալյան, Վիեննայի, Վերսալյան և Պոտսդամի գագաթնաժողովներին հաջորդած դարաշրջանները: Ներկայումս համաշխարհային տնտեսական կենտրոնը աստիճանաբար տեղափոխվում է Արևելյան և Հարավային Ասիա. ԱՄՆ-ի հիմնական մրցակիցը համարվում է Չինաստանը: Վաշինգտոնը հասկանում է, որ վաղ թե ուշ իր և Պեկինի միջև առճակատումը անխուսափելի է: Միաժամանակ նկատվում է ռուս-չինական համագործակցության խորացում, Մոսկվան ակտիվացել է Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: Չինաստանի հետ առճակատումից առաջ հարկավոր է «չեզոքացնել» Մոսկվային, որը կնշանակի անվերապահորեն վերահսկել Եվրոպայի, Միջին Ասիայի և Մերձավոր Արևելքի զգալի բնական հարստությունները: Եվրոպային, Ռուսաստանին, Ճապոնիային, Հարավային Կորեային և հնարավորության դեպքում նաև Հնդկաստանին իր ազդեցության ոլորտում ընդգրկելուց հետո Վաշինգտոնը տարածաշրջանում կստանա առավելություն տնտեսական և առաջավոր նոր տեխնոլոգիաների մշակման տեսանկյունից:

Փաստորեն, այսօր սանձազերծվել է համաշխարհային նոր պատերազմ, որը նախկիններից տարբերվում է նրանով, որ հակամարտող զինված ուժերի ռազմաճակատներն ու խրամատները ամենուր չեն: Ռազմական ուժը սահմանափակ է օգտագործվում, թեև չի բացառվում զանգվածային ոչնչացման զենքերի լայնածավալ օգտագործումը, այնուամենայնիվ հիմնական շեշտը դրվում է տեղեկատվական-տեխնոլոգիական, հակառակորդի տնտեսական և քաղաքական համակարգե-

րի ապակայունացման, «հինգերորդ շարայան» արդյունավետ օգտագործման, հասարակական գիտակցության փոփոխման, հակառակորդ երկրների պետական ինստիտուտների թուլացման և ամերիկամետ վարչակարգերի հաստատման վրա:

Ներկայումս մարդկությունը տեղեկատվական-հաղորդակցային տեխնոլոգիական կացութաձևից անցում է կատարում դեպի նորը՝ կենսատեխնոլոգիաների (մոլեկուլյար կենսաբանություն, գենային ինժեներիա), նանոտեխնոլոգիաների, արհեստական ինտելեկտի, գլոբալ ինֆորմացիոն ցանցերի, ինտեգրված արագընթաց հաղորդակցման համակարգերի: Միաժամանակ, պետություններից բացի, գլոբալ մրցակցությունն ուժեղանում է նաև անդրազգային տարբեր խմբավորումների միջև: Չինաստանը, Հնդկաստանը, Հարավարևելյան և Լատինական Ամերիկայի որոշ երկրներ Արևմուտքի առջև չեն բացում իրենց ֆինանսական միջոցները և նվազեցնում են ԱՄՆ-ի Դաշնային պահուստային համակարգի հնարավորությունները:

Այսպիսով, վերջին տասնամյակներին թուլացող ԱՄՆ-ն կարող է իր առաջնորդությունը պահել միայն մեկ ճանապարհով՝ իր իրական մրցակիցների համար ստեղծելով անկայունության գոտիներ: Ամերիկայան հայտնի քաղաքական մեկնաբան Դինեշ Դ Սուզան նշում է, որ հետամերիկյան դարաշրջանը շատերին է շփոթեցրել, և հնարավոր չէ չնկատել, որ ԱՄՆ-ին լուրջ մարտահրավեր է նետվել. շատ ամերիկացիներ հասկանում են, որ շուտով աշխարհում կարևոր դեր է խաղալու Չինաստանը¹: Գլոբալ պայքարի առաջին թատերաբեմը դարձավ Ուկրաինան, որտեղ աշխարհաքաղաքական պայքար սկսվեց մի կողմից ՌԴ-ի, իսկ մյուս կողմից՝ ԱՄՆ-ի և ԵՄ-ի միջև: Այդ պայքարի արդյունքներից է կախված նոր աշխարհակարգի կառուցվածքը:

Այժմ տեսնենք, թե ինչու հատկապես Ուկրաինան:

Դեռևս Բիսմարկն էր նշել, որ Ռուսաստանի հզորությունը կարելի է միայն թուլացնել, եթե նրանից անջատվի Ուկրաինան: Ընդ որում՝ անհրաժեշտ է ոչ միայն Ռուսաստանից պոկել Ուկրաինան, այլև այն հակադրել նրան, իրար դեմ հանել նույնակունք ժողովրդի երկու հատվածները և դիտել, թե ինչպես մի եղբայրը սպանում է մյուսին: Դրա համար անհրաժեշտ է, ուկրաինական ազգային էլիտայում գտնել և աճեցնել դավաճաններ, որոնց օգնությամբ ժողովրդի մեծ մասի ինքնագիտակցությունը կփոխվի այն աստիճանի, որ չհասկանալով ատելությունամբ կլցվեր ռուսական ամեն ինչի նկատմամբ և կատեր իր ցեղը²:

Ջր. Բժեզինսկին 1990-ական թվականների վերջերին նշում էր, որ «անկախ Ուկրաինայի առկայությունը հնարավորություն է տալիս ձևափոխելու Ռուսաստանը: Առանց Ուկրաինայի Ռուսաստանը դա-

¹ Տե՛ս Динеш Д'Суза. Америка: каким мир был бы без нее? М., 2015, էջ 329:

² Տե՛ս Глазьев Сергей, Украинская катастрофа: от американской агрессии к мировой войне? М., 2015, էջ 103-104:

դարում է եվրասիական կայսրություն լինելուց և վերածվում է ասիական պետության: Իսկ եթե Մոսկվային հաջողվի իր վերահսկողությունը հաստատել 52 մլն բնակչություն և հարուստ ռեսուրսներ ունեցող Ուկրաինայի վրա, որը ելք ունի դեպի Սև ծով, ապա Ռուսաստանը կրկին վերածվում է Ասիայից դեպի Եվրոպա տարածված հզոր կայսրության»³: 2008 թ. վերջինս կարծում էր, որ եթե Ուկրաինան դառնա Արևմուտքի բաղկացուցիչ մասը՝ ԵՄ անդամ, ապա դա կնպաստի, որ Ռուսաստանը ավելի արագ տեմպերով մերձենա Արևմուտքին⁴: Եվ հակառակը, եթե Մոսկվան նախօրոք իմանա, որ Ուկրաինան չի անդամակցի ո՛չ ԵՄ-ին և ո՛չ էլ ՆԱՏՕ-ին, քանի որ այդպես է ցանկանում Կրեմլը, ապա Ռուսաստանում կհամոզվեն, որ Ուկրաինան, Բելառուսը և հնարավոր է՝ Միջին Ասիայի երկրները կրկին կարող են հայտնվել իրենց կողմից վերահսկվող որևէ կազմավորման մեջ⁵:

Ուկրաինական հարցում բոլորովին այլ մոտեցում ունի Հ. Քիսինջերը: Նա կարծում է, որ ճիշտ չէ այն հարցադրումը, թե Ուկրաինան պետք է շարժվի դեպի Արևմուտք, թե՞ դեպի Արևելք: Նրա կարծիքով, եթե Ուկրաինան ցանկանում է գոյատևել և զարգանալ, ապա ոչ թե պետք է դառնա կողմերից որևէ մեկի համար առաջանանապատակ, այլ կամուրջ լինի նրանց միջև⁶: Եթե Ուկրաինան Արևելքի և Արևմուտքի կողմից դիտարկվի որպես հակամարտության բաղկացուցիչ մաս, ապա Ռուսաստանի և Արևմուտքի ու հատկապես Ռուսաստանի և Եվրոպայի միջև համագործակցության միջազգային համակարգի հեռանկարները տասնամյակներ հետո ի չիք կդառնան⁷:

Սակայն այս հարցում Վաշինգտոնը որդեգրեց միանգամայն ուրույն քաղաքականություն: Ուկրաինայում իրականացնելով հեղաշրջում և վերահսկելով այդ երկրի պետական կառույցները՝ ԱՄՆ-ին հաջողվեց Ռուսական աշխարհի մի մասը ուղղել հենց Ռուսաստանի դեմ, Ուկրաինան դարձնել ընդդեմ Ռուսաստանի ռազմական, հումանիտար և ինֆորմացիոն հենակետ, որի հիմնական նպատակը ուկրաինական հարավ-արևելքում ստեղծված քառսի տարածումն էր ՌԴ-ում և այնտեղ հեղաշրջում իրականացնելով՝ թուլացնել և մասնատել երկիրը:

Ուկրաինական թնջուկը հնարավոր էր հաղթահարել, եթե Վաշինգտոնը և Բրյուսելը համաձայնեին Մոսկվայի առաջարկին, որին հավանություն էին տալիս նաև արևմտյան բազմաթիվ գործիչներ ու փորձագետներ: Առաջարկվում էր ճանաչել Ուկրաինայի տարածքային

³ Бжезинский З. Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы. М., 1999, с. 61-62.

⁴ Տե՛ս և Киссинджер Г. Понять Путина. Политика здравого смысла. М., 2014, էջ 185:

⁵ Տե՛ս և Бжезинский З. Америка и мир. Беседы о будущем американской внешней политики. М., 2012, էջ 208:

⁶ Տե՛ս և Бжезинский З., Киссинджер Г. Россия в американской геополитике: до и после 2014 года, М., 2018, էջ 76:

⁷ Տե՛ս և նույն տեղը, էջ 177:

ամբողջականությունը. այն պետք է դառնար դաշնային պետություն, չընդգրկվեր որևէ ռազմաքաղաքական դաշինքում, և ռուսաց լեզուն ճանաչվեր որպես երկրորդ պետական լեզու: Նման դեպքում Ուկրաինան կդառնար բուֆեր Արևմուտքի ու Ռուսաստանի միջև ու կպահպաներ Ղրիմը: Սակայն Վաշինգտոնը Ուկրաինայի հարցում ունեւր միանգամայն այլ ծրագրեր: Իսկ Արևմուտքը պատրաստվում էր այդ շրջանում ինտեգրել Ուկրաինան ԵՄ-ին: Իհարկե՝ ոչ: Արևմուտքը այն կարող էր իրականացնել 2004 թ. նարնջագույն հեղափոխությունից հետո: Ուկրաինան Եվրոպայի համար բավականին մեծ և օտար պետություն է: Այն դժվար է ինտեգրել: Ստալինը, միացնելով քաղաքակրթական տեսանկյունից օտար Գալիցիան չկարողացավ այն յուրացնել: Այդ նույն սխալը չէր ցանկանում թույլ տալ Բրյուսելը: Նույն տեսանկյունից նման բախտի արժանացավ նաև Թուրքիան⁸: Արևմուտքի համար գլխավորն այն է, որ տեղի չունենա Ռուսաստանի և Ուկրաինայի մերձեցում, իսկ Կիևը իր ձեռքում գործիք դառնա Մոսկվայի ուժերը վատնելու համար: Կրեմլը կարող էր հաշտվել Ուկրաինայի անկախության, սակայն ոչ արևմտամետ և դեպի ՆԱՏՕ գնացող եղբայրական սլավոն երկրի գոյության հետ: Ուկրաինայում ստեղծվել էր հզոր արդյունաբերություն, Միբիբի բնակչության զգալի մասը կազմում են էթնիկ ուկրաինացիները, ռուսական առաջին պետությունը ստեղծվել էր ներկայիս Ուկրաինայի տարածքում, այստեղ են տեղի ունեցել ռուս ժողովրդի համար կարևոր բազմաթիվ ճակատամարտեր:

2019 թ. Ուկրաինան սահմանադրական ճանապարհով հաստատեց, որ իր առաջնահերթություններից են ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին անդամակցելը: Միաժամանակ ԱՄՆ-ի օժանդակությամբ ուժեղացնում էր ճնշումը Դոնեցկի և Լուգանսկի ինքնահռչակ հանրապետությունների նկատմամբ, որտեղ շուրջ 8 տարի ընթանում էին ռազմական գործողություններ: 2022 թ. դեկտեմբերի 7-ին Բայդենի հետ անհաջող բանակցություններից հետո Վ. Պուտինը փորձեց բարձրացնել խաղաղությանը, և դեկտեմբերի 17-ին ՌԴ ԱԳՆ-ն հրապարակեց Մոսկվայի պահանջները ԱՄՆ-ին ու ՆԱՏՕ-ին: ՆԱՏՕ-ից պահանջվում էր բացառել դաշինքի դեպի արևելք ընդլայնումը, Արևելաեվրոպական երկրներում և Ուկրաինայում դադարեցնել ռազմական գործունեությունը, Արևելյան Եվրոպայում չտեղակայել հրթիռներ և միջուկային զենք, ինչպես նաև նախկին խորհրդային հանրապետություններին չներգրավել Հյուսիսատլանտյան դաշինքում:

Մոսկվան Արևմուտքին հիշեցնում էր, որ 1997 թ. մայիսի 27-ի ՆԱՏՕ-ի հետ համաձայնության նախագծի 4-րդ հոդվածում նշված էր, որ Դաշինքը Եվրոպայի այլ երկրներում չի տեղակայի զինված ուժեր և սպառազինություններ: Իր հերթին ՌԴ-ն պարտավորվում էր, որ միջին

⁸ Ст' у Шамир Израэль, Асимметричный ответ Путина, М., 2014, էջ 84:

¹¹ Տե՛ս ՀՀ առողջապահության նախարարի № 65-ն հրաման ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններում փոփոխություններ և յրազումներ կատարելու մասին, 21 օգոստոսի 2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155352>

¹² Տե՛ս նույն տեղը:

Այս միջոցառումները ռեպրեսիվ բնույթի էին, և հետևաբար՝ այս ամենը չէր համապատասխանում ՎՓՀ հիմնական սկզբունքներին. դրական հաղորդակցությունների և դրական փորձի ամրապնդման միջոցով ցանկալի վարքագիծ ձևավորելու փոխարեն պատվաստվելը վերածվեց տնտեսական վնասներ կրելուց խուսափելու միջոցի, դրական հույզերի փոխարեն օգտագործվեց վախի հուզական համատեքստը:

Վերոնշյալ հրամանից հետո կտրուկ աճեց նաև պատվաստվել ցանկացողների թիվը: Շատերի որոշման վրա ազդեց վարակման և մահվան դեպքերի աճը: Մյուսները մտափոխվեցին, քանի որ չէին ցանկանում երկու շաբաթը մեկ թեստ հանձնել՝ ծախսելով սեփական ֆինանսական միջոցները, ժամանակը և քաշքշուկի մեջ ընկնելով կլինիկաներում թեստավորում անցնելու համար: Պատվաստվողների աճ գրանցվեց ոչ այնքան թիրախային ՎՓՀ-ի շնորհիվ, որքան դարձյալ չպատվաստվածների նկատմամբ ճնշումների արդյունքում: ՎՓՀ-ում առկա էին բազմաթիվ հաղորդագրություններ ցանկալի վարքագծի՝ պատվաստվելու անհրաժեշտության վերաբերյալ: Դրանք, սակայն, չամրապնդվեցին. պատվաստումների արդյունավետության մասին վկայող փաստերի փոխարեն քաղաքացիները ստանում էին իրարամերժ տեղեկատվություն՝ հիվանդացության և մահացության աճի, պատվաստանյութերի վերաբերյալ դավադրության տեսությունների և հնարավոր բացասական ազդեցության, պատվաստված մարդկանց կորոնավիրուսով վարակվելու մասին: ՎՓՀ արդյունավետ ռազմավարության բացակայությունը հանգեցրեց պատվաստանյութերի և պատվաստման նկատմամբ բացասական դիրքորոշումների ձևավորմանը և կառավարության նկատմամբ անվստահությանը:

2021 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ արդարադատության նախարարությունը տարածեց տեղեկություն, որ որոշ պաշտոնյաների նկատմամբ հնարավոր չէ կիրառել պատվաստման սերտիֆիկատ կամ ՊՇՌ թեստ չներկայացնելու դեպքում աշխատանքից ազատելու կանոնը. «Պատճառը հետևյալն է, օրինակ՝ Ազգային ժողովի պատգամավորներին ընտրում է ժողովուրդը, Հանրապետության նախագահին, Մարդու իրավունքների պաշտպանին, անկախ մարմինների անդամներին և այլն՝ Ազգային ժողովը: Իր հերթին, օրինակ, դատավորների լիազորությունները դադարում են Սահմանադրությամբ նախատեսված սահմանափակ հիմքերով, վարչապետը՝ նշանակվելով սահմանադրական գործընթացների արդյունքում, ըստ էության, չունի այնպիսի վերադաս մարմին, որը վերջինիս կազատի կամ կնշանակի այդ պաշտոնին և այդպես շարունակ: Հետևաբար, նույնիսկ ցանկության դեպքում էլ հնարավոր չի լինի վերոնշյալ անձանց նկատմամբ կիրառել այդ հետևվանքը, այսինքն՝ վերջիններիս այդ հիմքով ազատել աշխատանքից»¹³:

¹³ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջից, 15 հոկտեմբերի, 2021 թվական, <https://www.facebook.com/mojarmenia>

Այս տեղեկությունը հանրությունն ընկալեց որպես ՀՀ վարչապետին և այլ պաշտոնյաներին տրված՝ չպատվաստվելու և դիմակ չկրելու արտոնություն, որը բարձրացրեց պատվաստվելու գործընթացի նկատմամբ անվստահության նոր ալիք:

Այդուհանդերձ, COVID-19-ի դեմ պատվաստումների մեկնարկից ի վեր 2022 թվականի մայիսի 23-ի դրությամբ ՀՀ-ում ընդհանուր առմամբ իրականացվել է 3089295 թեսթավորում, գրանցվել է կորոնավիրուսային հիվանդության 422939 դեպք և կորոնավիրուսից մահերի 8624 դեպք: Նույն օրվա դրությամբ իրականացվել է ընդհանուր առմամբ 2193307 պատվաստում, առաջին դեղաչափը ստացել է 1 132 945 մարդ, ամբողջությամբ պատվաստված է 1003725 մարդ, իսկ 52757 մարդ ստացել է նաև բուստեր¹⁴: Հետևաբար՝ ամբողջությամբ պատվաստված է ՀՀ բնակչության 33.8%-ը, 1.8%-ը ստացել է նաև բուստեր: Պատվաստանյութի միայն առաջին դեղաչափը ստացել է ՀՀ բնակչության 4.4%-ը:

Պատվաստումների վերաբերյալ դիրքորոշումները և կարծարատիպերը ՀՀ-ում

Դիտարկենք, թե ինչպիսի կարծարատիպեր են պայմանավորում պատվաստումների հանդեպ դիրքորոշումներն ու մոտիվացիան հասարակության 3 տարբեր խմբերում՝ պատվաստված քաղաքացիների, քաղաքացիների, որոնք պատրաստվում են պատվաստվել, և այն քաղաքացիների, որոնք ոչ մի դեպքում չեն ցանկանում պատվաստվել:

Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից 2021 թվականի հուլիսին իրականացրած հետազոտության արդյունքները¹⁵ թույլ տվեցին վեր հանել պատվաստվողների վերաբերյալ մի շարք օրինաչափություններ: Ավելի հաճախ պատվաստվում են՝

- զբաղվածները, քանի որ ստիպված են,
- ռիսկի խմբի ներկայացուցիչները, քանի որ վախենում են հիվանդության բարդ ընթացքից,
- նրանք, ովքեր համաձայն են պետության քաղաքականությանը:

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի գիտահետազոտական լաբորատորիայի՝ 2021 թվականի հոկտեմբերին խորին հարցազրույցի մեթոդի կիրառմամբ իրականացրած որակական հետազոտության արդյունքների համաձայն՝ քաղաքացիները պատվաստվել են հետևյալ նկատառումներից ելնելով.

- Որպեսզի պաշտպանվեն վիրուսից, իսկ վարակվելու դեպքում խուսափեն բարդություններից և/կամ մահանալուց:

¹⁴ Տե՛ս ՀՀ առողջապահության նախարարության ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջից, 23 մայիսի, 2022, <https://www.facebook.com/ministryofhealthcare>

¹⁵ Տե՛ս Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն, Միջազգային հանրապետական ինստիտուտ, հուլիս, 2021, https://www.iri.org/sites/default/files/lessiwyg/rmenian_final_presentation_09_03_2021.pdf?fbclid=IwAR3f-J_W8zV4VpYv94fdoO1DBcQ1-LjenK9sN1YhdF1jyoxPGJCGh8WZ0

- Որպեսզի նվազեցնեն վարակի տարածման ռիսկը:
- Քանի որ ռիսկի խմբի ներկայացուցիչ են՝ տարեց են, աշխատում են սպասարկման ոլորտում, աշխատանքի բերումով շփվում են բազմաթիվ մարդկանց հետ:

- Աշխատանքի բերումով ստիպված են եղել պատվաստվել. մասնավորապես պետական աշխատողները, որպեսզի չզրկվեն պարզևավճարներից և աշխատանքից:

- Որպեսզի կարողանան մեկնել արտասահման՝ աշխատանքի բերումով կամ բարեկամներին այցելելու:

- Այդպես հեշտ է, որ էլ չմտածեն պատվաստվելու կամ չպատվաստվելու պատճառների մասին (*այս պատասխանը բնորոշ էր երիտասարդներին*):

Նույն հետազոտությունը թույլ տվեց վեր հանել նաև մի շարք **կարծրատիպային հիմնավորումներ**, որոնցով առաջնորդվում են չպատվաստվող քաղաքացիները:

- Բոլոր պատվաստումները բացասաբար են ազդում մարդու իմունային համակարգի վրա:

- Պատվաստանյութը կարող է բացասական կողմնակի ազդեցություն ունենալ առողջության վրա, կարճ ժամանակահատվածում հնարավոր չէր բավականաչափ փորձարկել պատվաստանյութերը և նվազեցնել հնարավոր կողմնակի ազդեցությունները: Պատվաստումից հետո բարդությունների և/կամ մահվան ելքերի մասին տեղեկությունները. ըստ հարցվողների՝ պատվաստումն առաջացնում է սիրտ-անոթային անբավարարվածություն, ինֆարկտ, հատկապես տղամարդկանց շրջանում: Կողմնակի ազդեցություններից վախենում են նաև նրանք, ովքեր պատրաստվում են երեխա ունենալ, մայրանալ, վախենում են, որ պատվաստման պատճառով երեխան կծնվի առողջական խնդիրներով:

- Պետք է վեց ամիսը մեկ պատվաստվել, մինչև յոթ անգամ:

- Ծանոթ բժիշկները դեմ են, խորհուրդ չեն տալիս, և բժիշկները չեն պատվաստվում, ասում են՝ գիտեն՝ ինչպես բուժել կորոնավիրուսից կամ քաղցկեղից, բայց չգիտեն՝ ինչպես բուժել պատվաստման հետևանքները:

- Չեն վստահում պետությանը, վարչապետին, առողջապահության նախարարին և հետևաբար պատվաստումներին:

- Շատերը պարզապես հակադրվում են պարտադրանքին:

ՀՀ-ում տարածում են գտել նաև դավադրության տեսությունները՝

- ✓ Պատվաստանյութի միջոցով մարդկանց չիպավորում են՝ նրանց վարքը վերահսկելու և կառավարելու համար:

- ✓ Պատվաստանյութը բացասաբար է անդրադառնում վերարտադրական ֆունկցիայի վրա, առաջացնում է չբերություն:

- ✓ Պատվաստվելուց հետո կյանքի տևողությունը կրճատվում է:

✓ Պատվաստանյութն անհայտ նպատակներով արվող լայնածավալ գիտափորձ է:

✓ Կորոնավիրուսը փող աշխատելու միջոց է, բիզնես, պատվաստանյութը այդ թվում:

✓ Հայաստան անորակ պատվաստանյութ են բերում, ժամկետանց, որից այլ երկրներ հրաժարվում են:

COVID-19 համավարակով պայմանավորված ՎՓՀ ռազմավարության արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիները

Պատվաստումների վերաբերյալ կարծրատիպերի ձևավորման գործընթացը շարունակական է և մեծ ազդեցություն ունի քաղաքացիների դիրքորոշումների ձևավորման վրա: Սոցիալական ցանցերում տարածվում են դեմոտիվացիոն մեմեր, քննարկումներ և տեսահոլովակներ: Միջանձնային հաղորդակցություններում մարդիկ միմյանց են փոխանցում չստուգված տեղեկություններ, կարծրատիպային պատկերացումներ, իսկ ՋԼՄ-ներն առաջնային չեն համարում պատվաստումների վերաբերյալ փորձագիտական կարծիքների և փաստերի գներացումն ու տարածումը:

Այս բոլոր կարծրատիպերի և դավադրության տեսությունների առաջացման հիմնական պատճառը պատվաստումների և տարբեր պատվաստանյութերի ազդեցության մասին լիարժեք հետազոտահեն տեղեկատվության և փաստահեն վարքագծի փոփոխման ռազմավարական հաղորդակցության բացակայությունն է:


Մինչդեռ այսօր սոցիալական և վարքագծային փոփոխությունների տիրույթում իրականացվող հաղորդակցությունների միջազգային պրակտիկան ապացուցել է իր արդյունավետությունն առողջապահության, առողջ ապրելակերպի, երեխաների իրավունքների պաշտպանության, կրթության ոլորտներում և ներառում է մի շարք մոտեցումներ և գործիքներ՝ միջանձնային հաղորդակցություններ, զանգվածային հաղորդակցման միջոցներ, ՋԼՄ-ներ, սոցիալական մեդիաներ ու սոցիալական ներգրավումն ու մոբիլիզացիան, որոնց տեղին ու ռազմավարական կիրառումը կարող է տալ կայուն արդյունք՝ վարքագծի ցանկալի փոփոխություն:

Վարքագծի փոփոխության հաղորդակցությունների ռազմավարություն մշակելիս կարևոր է հասկանալ, թե ինչ պատկերացումներ ունեն մարդիկ պատվաստման գործընթացի վերաբերյալ, գնահատել որ հարթակներն են առավել արդյունավետ հաղորդակցման գործընթացի տարբեր փուլերում և տարբեր նպատակների հասնելու համար: Զանգվածային լրատվամիջոցների կիրառումը հաղորդակցությունը կարող է ապահովել ստուգված և հավաստի տեղեկատվության հասանելիությունը և դրական վերաբերմունքի ձևավորումը թիրախային լսարանի համար: Մակայն, երբ կա անհրաժեշտություն նոր վարքագծի

դրսևորման, առավել կարևոր են դառնում հստակ մշակված քաղաքականությունը և անհատի սոցիալական միջավայրը (*տե՛ս նկար 3*):

Նկար 3

ՎՓՀ նախահիման շրջանակ¹⁶



Այսպիսով՝ պատվաստման հանդեպ դրսևորված դիրքորոշումները տարածելի են պատվաստումների սկզբունքային կողմնակիցներից մինչև կտրուկ հրաժարվողների վրա: Չկողմնորոշվածները հակադրվող այս բևեռների միջև ամենամեծ տոկոսն են կազմում և ամենաբազմաբնույթ զանգվածը: ՎՓՀ արշավները նախ և առաջ պետք է նրանց հասցեագրված լինեն: Այս սոցիալական խմբերի հետ աշխատելիս պետք է կիրառել արդեն իսկ ստուգված և իրենց արդարացրած հաղորդակցային ռազմավարությունները¹⁷: Պատվաստման վերաբերյալ ՎՓՀ-ները պետք է ընթանան միանշանակ դրական հունով, առանց արգելանքների և իմպերատիվների: Առավել արդյունավետ է դնել դրական նպատակներ, այն է՝ ավելացնել կյանքի տևողությունը, բարձրացնել կյանքի որակը, հետևել առողջ ապրելակերպի կանոններին և այլն:

Պարզ է, որ կորոնավիրուսային համավարակի նահանջից հետո էլ վարքի որոշակի նմուշներ ու դրսևորումներ դեռևս շարունակելու են մնալ որպես սովորական, և հետքովիդյան հաղորդակցություններն արդեն պետք է բխեն համավարակից ելքը կոմունիկացնող համատեքստից և ավելի հեռահար նպատակներից:

¹⁶ St u “Behavior change communication (bcc) for HIV/AIDS, A strategic framework”, September 2002, Family Health International Institute for HIV/AIDS 2101 Wilson Boulevard, Suite 700 Arlington, VA 22201 U.S.A., <https://www.hivpolicy.org/Library/HPP000533.pdf>

¹⁷ St u «Общение с пациентами о вакцинации от COVID-19, ВОЗ, Европейское региональное бюро», 2021, <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/341841/WHO-EURO-2021-2282-42037-58877-rus.pdf>

НВАРД МЕЛКОНЯН, ЮЛИАНА МЕЛКУМЯН – Коммуникации изменения поведения во время COVID-19. – В данной статье проанализированы осуществленные во время COVID-19 коммуникации изменения поведения. Пандемия наложила свой отпечаток не только на здоровье людей, но и на образ жизни и повседневное поведение, формируя так называемую «новую нормальность». Понятие «новая нормальность» используется сегодня в контексте COVID-19: то, что раньше было ненормальным и неприемлемым, теперь становится обыденным и привычным. Изменение норм поведения лежит в основе борьбы с пандемией, которая включает в себя развитие навыков, наращивание потенциала и мотивацию. Обеспечение желаемого изменения поведения возможно лишь после определения основных барьеров изменения социального поведения. Научно-обоснованные методы изменения поведения включают целый ряд подходов, от обучения до ролевого моделирования. Одними из самых труднопреодолимых барьеров являются социальные стереотипы.

Основными целями стратегии изменения поведения во время пандемии COVID-19 были содействие распространению антипандемических правил и значительному повышению уровня вакцинации. В контексте коммуникаций изменения поведения эксперты однозначно утверждают, что до сегодняшнего дня нет доказанного эффективного лечения коронавируса, и единственный способ снизить смертность от него – это вакцинация.

Анализ мер, предпринятых для продвижения процесса вакцинации в Армении, показывает, что некоторые из них носили репрессивный характер; вместо преодоления стереотипов и закрепления положительных переживаний вакцинация в реальности стала средством избежания экономического ущерба, вместо положительных эмоций использовался эмоциональный фон страха.

Ключевые слова: коммуникации изменения поведения, коммуникационная стратегия, стереотипы, мотивация, «новая нормальность», вакцинация, пандемия

NVARD MELKONYAN, YULIANA MELKUMYAN – Behavior Change Communications during COVID-19. – This article discusses the behavioral change communications used during COVID-19. The pandemic left its impact not only on people's health, but also on people's lifestyles and daily behavior, creating a "new normal". The concept of "new normal" is used today in the context of COVID-19: what used to be abnormal and unacceptable is now becoming commonplace. Changing the behavioral norms is at the core of fighting the pandemic, which includes building skills, capacity and motivation. Once the barriers to behavior change are identified, it is possible to ensure the desired behavioral change. The scientifically studied behavior change methods include a range of approaches, from education to role modeling. One of the most difficult obstacles to overcome is social stereotypes.

The main goals of the behavior change strategy during the COVID-19 pandemic were to contribute to the dissemination of anti-pandemic rules and increase of the vaccination level. In the context of behavioral change communications, experts argued that there is still no clearly proven effective treatment for the coronavirus; the only way to reduce deaths is vaccination.

The analysis of measures taken to promote the vaccination process in Armenia shows that some of them were repressive; instead of overcoming stereotypes and reinforcing positive experiences, the vaccination became a means of avoiding economic harm, the emotional context of fear was used instead of positive emotions.

Key words: behavior change communications, communication strategy, stereotypes, motivation, "new normal", vaccination, pandemic

ԴԱՎԱԴՐԱՊԱՇՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ

ՎԻԿՏՈՐՅԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Թերի պարզաբանված, դիտավորությամբ ուղղորդվող և ոչ հավաստի դավադրապաշտական տեսությունները իրական մարտահրավերներ են ժամանակակից ճգնաժամերի կառավարման և հաղթահարման համատեքստում: Վառ օրինակներից են Covid-19 (կորոնավիրուս) համավարակի պայմաններում ակտիվ տարածում ստացած ապատեղեկատվությունները և դրանց հետ սերտորեն կապված դավադրապաշտական տեսությունները, որոնք հյուսվում են միջազգային և տեղական տարբեր դերակատարների շուրջ: Սույն աշխատանքում ներկայացվում են դավադրապաշտական տեսությունների հակադիտականությունը ի ցույց դնող միջազգային փորձն ու տեսությունը և մատնանշվում նմանօրինակ տեսությունների բացասական ազդեցությունները հասարակական կարծիքի ձևավորման և վարքագծի ուղղորդման վրա:

Բանալի բառեր – կորոնավիրուս, ապատեղեկատվություն, դավադրապաշտական տեսություններ, տեղեկատվություն, սոցիալական մեդիա, միջազգային քաղաքականություն

Դավադրապաշտական տեսությունները (միֆեր, դավադրության տեսություններ, կոնսպիրոլոգիա)՝ որպես ապատեղեկատվության տարածման և՛ սկզբնաղբյուր, և՛ տրամաբանական շարունակություն, ներկայումս առանձնակի ուշադրության են արժանանում գիտական հանրության շրջանում:

Ինչպես Ս. Լևանդովսկին և Ջ. Քուքն են պնդում, դավադրություններ կան, սակայն չի կարելի դրանք շփոթել դավադրապաշտական տեսությունների հետ: Օրինակ՝ ԱՄՆ Ազգային անվտանգության գործակալությունը լրտեսում է համացանցի օգտատերերին: Ծխախոտ արտադրող մագնատ կառույցները օգտագործում են իրենց լծակները՝ հասարկությունից թաքցնելու ծխախոտի վատ ազդեցությունների իրական պատկերը:

Ի հակադրություն այս ամենի՝ դավադրապաշտական տեսությունները այդպես էլ չեն ստանում գիտական հիմնավորում, տեղին և սպառնիչ հակաարձագանք: Ուստի դրանք տեղեկատվության շրջանառության մեջ շատ դիմացկուն են և հասարակական կարծիքի վրա ունեն զգալի ազդեցություն¹:

¹ Տե՛ս Lewandowsky, S., & Cook, J., (2020), The Conspiracy Theory Handbook, էջ 3 // The Conspiracy Theory Handbook | Center For Climate Change Communication:

Դավադրապաշտական տեսությունը բովանդակային առումով նույն ապատեղեկատվությունն է, քանի որ իր հիմքում ընկած է դիտավորությամբ ձևավորված և նույն կերպ տարածվող ոչ հավաստի, թերի պարզաբանված, կիսատ լուսաբանված տեղեկատվություն²:

Ազդելով հասարակական կարծիքի վրա՝ նման տեսությունները կարող են ուղեկցվել բազմաթիվ վտանգներով: Մասնագիտական գրականության մեջ շատ հեղինակներ այդ վտանգների շարքին են դասում մարդկանց քաղաքականությամբ ի սպառ չհետաքրքրվելու միտումը, չի բացառվում նաև հակառակը՝ քաղաքականության հանդեպ հետաքրքրության աճը³:

Դավադրապաշտական տեսությունների (այսուհետ՝ տեսություն) առցանց շրջանառության գործում սոցիալական ՁԼՄ-ները դառնում են ուղղակի միջնորդներ՝ իրենց արագությամբ, մեծ պահանջարկով և հարուստ ու դյուրին կիրառելի գործիքակազմով:

Տեսությունները լայն արձագանք են գտնում հասարակության շրջանում մի քանի հիմնական պատճառներով: Նախ՝ ապագայի հանդեպ վախն ու թերահավատությունը մարդկանց որոշ խմբի ստիպում են հավատալ դրանց և տարածել դրանք այլ մարդկանց շրջանում՝ փորձելով տեղեկացնել կամ «օգնել» վերջիններս՝ դիմակայելու վերահաս աղետները: Մարդկանց այս խումբը, որպես կանոն, պարզապես գաղափարակից ընկերներ-աջակիցներ է փնտրում սեփական տագնապները կիսելու համար⁴:

Մյուս դեպքում տեսություններին հեշտ է հավատալ, երբ տեղեկատվությունը այս կամ այն երևույթի մասին քիչ է, համոզիչ չէ կամ պարունակում է անորոշություն և անպատասխան հարցեր: Այս դեպքում էլ միջերը «գալիս են օգնության»՝ փարատելու մարդկանց շրջանում առաջացած անորոշությունը⁵: Միաժամանակ, միջերի հիմքում ընկած է այս կամ այն երևույթը տարբեր մարդկանց և կառույցների հետ կապելու միտումը՝ փնտրելով մեղավորներ ու պատասխանատուներ: Սա հիմնականում աշխատող տարբերակ է մեծ հնչեղություն և համամարդկային նշանակություն ունեցող իրադարձությունների համատեքստում⁶: Վերջապես, տեսությունները հարցականի տակ են

² Տե՛ս **Fetzer J.**; Information: Does it have to be true? *Minds and Machines*, 14(2), May, 2004, էջ 223–229:

³ Տե՛ս **Jolley, D., & Douglas, K. M.**, (2013), The social consequences of conspiracism: Exposure to conspiracy theories decreases intentions to engage in politics and to reduce one's carbon footprint. // *British Journal of Psychology*, doi:10.1111/bjop.12018, 105 էջ:

⁴ Տե՛ս **Uscinski, J. E., & Parent, J. M.**, (2014), *American conspiracy theories*. // Oxford, UK: Oxford University Press:

⁵ Տե՛ս **Kovic, M., & Fuchslin, T.**, (2018), Probability and conspiratorial thinking. // *Applied Cognitive Psychology*, doi:10.1002/acp.3408, 32 էջ:

⁶ Տե՛ս **Franks, B., Bangerter, A., & Bauer, M. W.**, (2013), Conspiracy theories as quasi-religious mentality: An integrated account from cognitive science, social representations theory, and frame theory. // *Frontiers in Psychology*, doi:10.3389/fpsyg.2013.00424, էջ 4:

դնում արդեն իսկ գոյություն ունեցող պաշտոնական մեկնաբանությունները այս կամ այն հարցի շուրջ⁷:

Մեկ այլ խումբ տեսաբաններ հակված են տեսությունների հետագա տարածումը կապելու հասարակական այն խմբերի հետ, որոնք իրենց «օտարացած» են զգում հասարակությունից՝ ելնելով իրենց սոցիալական, քաղաքական և տնտեսական պատկանելությունից: Հիմնականում նրանց առաջնորդում է անարդարության և խտրականության գոհ լինելու զգացողությունը⁸:

Այսուհանդերձ, գրականության մեջ այսօրինակ տեսությունները տիպաբանվում են չորս հատկանիշներով՝ ա) խումբ, բ) գաղտնի գործողություն, գ) իշխանության զավթում կամ իշխանական լիազորությունների չարաշահում՝ ճշմարտությունը կոծկելու նպատակով և սեփական շահին նախապատվություն տալով, դ) հանրային շահի անտեսում⁹:

Ուրորտը հետազոտող տեսաբանները համամիտ են նաև այն հարցում, որ այն մարդիկ, որոնք հավատում են որևէ տեսության, հակված են հեշտորեն հավատալու այլ տեսությունների ևս՝ անգամ այլ երևույթների և իրադարձությունների շուրջ հյուսված¹⁰: Ընդ որում, շատ տեսաբաններ պնդում են, որ ապատեղեկատվությունները և դրանք ուղղորդող կամ դրանցից սերող տեսությունները ազդում են նաև այն մարդկանց վրա, ովքեր չեն օգտվում առցանց տեղեկատվությունից¹¹:

Կորոնավիրուսը դավադրապաշտական տեսությունների թիրախում

Կորոնավիրուսի մասին հասարակությանը մատուցված լրատվությունը հավակնում է մարդկանց շրջանում ստեղծելու կա՛մ առողջապահական ճգնաժամ, կա՛մ համաշխարհային քաղաքական խաղի պատկեր: Այն ընկալվում և քննարկվում է համաձայն այն լրատվութ-

⁷ Տե՛ս **Sapountzis, A., & Condor, S.**, (2013), Conspiracy accounts as intergroup theories: Challenging dominant understandings of social power and political legitimacy// *Political Psychology*, doi:10.1111/pops.12015, էջ 34:


⁸ Տե՛ս **Steven, L., & Krasenberg J.**, (2017), Dealing with fake news, conspiracy theories, and propaganda in the classroom, *Ran Centre of Excellence*, Budapest:

⁹ Տե՛ս **Uscinski J. E. & Parent, J. M.**, (2014), *American Conspiracy Theories* // Oxford University Press:

¹⁰ Տե՛ս **Douglas, K. M., & Sutton, R. M.** (2011). Does it take one to know one? Endorsement of conspiracy theories is influenced by personal willingness to conspire. // *British Journal of Social Psychology*, էջ 50: Նաև՝ **Lewandowski, S., Oberauer, K., & Gignac, G.** (2013). NASA faked the moon landing—therefore (climate) science is a hoax: An anatomy of the motivated rejection of science. // *Psychological Science*, էջ 24: Նաև՝ **Swami, V., Coles, R., Stieger, S., Pietschnig, J., Furnham, A., Rehim, S., & Voracek, M.** (2011). Conspiracist ideation in Britain and Austria: Evidence of a monological belief system and associations between individual psychological differences and real-world and fictitious conspiracy theories. // *British Journal of Psychology*, էջ 102:

¹¹ Տե՛ս **Einstein, K. L., & Glick, D. M.**, (2015), Do I think BLS data are BS? The consequences of conspiracy theories. // *Political Behavior*, doi:10.1007/s11109-014-9287-z, էջ 37: Տե՛ս **Jolley, D., Meleady, R., & Douglas, K. M.**, (2019), Exposure to intergroup conspiracy theories promotes prejudice which spreads across groups. // *British Journal of Psychology*. doi:10.1111/bjop.12385:

յան և տեղեկատվության, որն ակտիվորեն շրջանառվում է մեդիա հարթակում՝ ուղղված տարբեր կրթական մակարդակի, տարիքի, մասնագիտության և անգամ սեռի մարդկանց: Հենց այդ խաղերն էլ ընկած են դավադրապաշտական տեսությունների հիմքում: Առավել պատկերավոր ներկայացնելու համար մենք մշակել ենք ստորև բերված սույն գծապատկերը:



Այսպիսով, կորոնավիրուսի մասին պատկերացումները ձևավորվում են գիտական հետազոտությունների, պետականորեն մշակված քաղաքականությունների, հանրային կամ մասնագիտական շրջանակների կարծիքների ու զեկույցների, լրատվական հոդվածների կամ միջազգային լավ ու վատ փորձի հիման վրա: Այս ամենն իր ուրույն տեղն է գտնում առօրյա-խոսակցական դիսկուրսներում՝ անխուսափելիորեն կրելով լրատվության սուբյեկտիվ մեկնաբանությունների և ասեկոսեների ազդեցությունը: Փաստորեն, խոսքը այն հնարավոր բոլոր ազդակների մասին է, որոնք պարունակում են ցանկացած ծավալի կամ որակի տեղեկատվություն կորոնավիրուսի մասին:

Հաջորդ քայլն ակտիվ շրջանակից դուրս եկող արտադրանքն է, որը պայմանականորեն կարող ենք անվանել միջազգային և տեղական լրատվություն՝ ողողված և՛ հավաստի ու ճշտված, և՛ մանիպուլյատիվ ու բացարձակ սուտ կամ մասնակի ճշգրտությամբ տեղեկատվությամբ:

Իրավիճակը ավելի է բարդանում, երբ կարծիքները համընկնում են, թե սոցիալական ՋԼՄ-ներում զետեղված լրատվությունը տեղեկատվության և հաղորդակցության աղբյուր է, այն ձևավորում է հանրային կարծիք, կրթում ու սոցիալականացնում է հասարակությանը: Այդ դեպքում պետք է արձանագրել, որ հասարակական կարծիքի ձևավորումից ընդհուպ հասարակական վարքագծի դրսևորում ապատեղեկատվությունն այլևս ունի նշանակալի կշիռ ու դեր:

Կորոնավիրուսի համավարակին առնչվող ապատեղեկատվության մեծ ծավալներն ու բազմազանությունը համավարակն ինքնին դարձնում են ավելի փոքր գործոն, որը մանիպուլյացվում է զանազան շահագրգիռ դերակատարների կողմից: Այսինքն՝ կորոնավիրուսի մասին ապատեղեկատվության ծավալները թույլ չեն տալիս իրական և կշռադատված պատկերացում կազմել հիմնախնդրի մասին:

Կտրական և միանշանակ հնարավոր չէ գնահատել անհատների, պետությունների, մասնավոր կորպորացիաների կամ մշակված քաղաքականությունների ներգրավվածությունը և ազդեցությունը համավարակով պայմանավորված ապատեղեկատվության տարածման և տեսությունների զարգացման գործում: Օրինակ՝ հստակ չեն ԱՄՆ-ի թվայնալ շահագրգռվածությունը կորոնավիրուսի տարածման հարցում կամ Բելառուսի նախագահ Ա. Լուկաշենկոյի կողմից կորոնավիրուսի վտանգները մերժելու կամ դրա դեմ պայքարի սեփական լուծումներն առաջադրելու հետևանքները: Միանշանակ չէ նաև համավարակով պայմանավորված Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը:

Առավել շոշափելի ու նկատելի են ապատեղեկատվության տարածմամբ պայմանավորված հասարակական մշակույթում որակային այնպիսի ձևափոխություններ, որոնցից են, օրինակ, թերահավատությունը սահմանվող կարգավորումների հանդեպ, անվստահությունը պաշտոնական լրատվության հանդեպ և այլն: Դիմակ կրելը, էլեկտրոնային կառավարման համակարգերի և թվային հավելվածների անհրաժեշտության գիտակցումը և հասանելիության ապահովումը, այլընտրանքային և հիբրիդային կրթության ու աշխատանքի գործիքների ներդրումը և կիրառությունը ևս կարող են պատճառ դառնալ հասարակական մշակույթում համավարակով պայմանավորված էական որակային փոփոխությունների:

Դավադրապաշտական տեսությունները միջազգային հարաբերությունների համատեքստում

Երբ համավարակը ակտիվ շրջան թևակոխեց, մեդիայի թիրախում հայտնվեցին պետություններ և միջազգային այլ դերակատարներ, որոնց վերագրվում էին և՛ քաղաքական ապատեղեկատվության ու դավադրապաշտական տեսությունների տարածողների, և՛ դրանց «գոհը» լինելու դերեր: Վարկածները, որոնք ընկած են «մեդադրանքների» հիմքում, գանազան են և արագ համալրվող: Որոշակի ժամանակ դրանք լինում են արդիական, այնուհետև՝ պակաս հետաքրքիր: Բոլոր դեպքերում, մինչ օրս չկա որևէ գիտական հիմնավորում կամ փաստարկված և հավաստի արդարացում վարկածների, որոնք կրում են պնդումներ ազգերի վերացման, աուտիկ սերունդների ստեղծման, գենի խեղման, համամարդկային ոչնչացման կենսաբանական գենի ստեղծման և այլնի մասին:

Հյուսիսատլանտյան դաշինք (ՆԱՏՕ): Համաձայն ՆԱՏՕ-ի պաշտոնական դիրքորոշման՝ Ռուսաստանը համավարակի մասին ապատեղեկատվության և դավադրապաշտական տեսությունների տարածման հիմնական պատասխանատուն է: Ռուսաստանի «անհագ մղումը՝ պախարակելու ՆԱՏՕ-ին» հիմնականում կապվում է վերջինիս զլոբալիստական նպատակների և համաշխարհային դերի շարունակական բարձրացման մտայնությունների հետ:

ՆԱՏՕ-Ռուսաստան հարաբերությունների սրումը վերագրվում է 2014 թ. Ղրիմի թերակղզու պատկանելության հարցը ռազմական ճանապարհով լուծելուն, իսկ համավարակով պայմանավորված՝ համաշխարհային իրավիճակը վերստին խորացնելու այն:

ՆԱՏՕ-ի հետ է կապվում այն հայտնի «ռուսական թեզը», թե «Քոլիդ-19-ը ՆԱՏՕ-ի կողմից ստեղծված զենք է»¹²: ՆԱՏՕ-ն բնականաբար հերքեց այն՝ հղումը տալով Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) պաշտոնական հայտարարությանը, առ այն, որ վիրուսը կենդանածին է, այլ ոչ թե լաբորատորիաներում ստեղծված, և մինչև 2019 թ. դեկտեմբերն այն եղել է մարդկությանն ու գիտությանն անհայտ երևույթ¹³:

Նույն ժամանակ Իրանի Իսլամական Հանրապետությունում պաշտոնական մակարդակով հավանություն տրվեց կորոնավիրուսի կենսաբանական զենք լինելու վարկածին՝ մերժելով արտասահմանից եկող բժշկական ցանկացած օժանդակություն և միջամտություն: Իր հայտարարություններից մեկում Իրանի գերագույն հոգևոր առաջնորդ Ալայթոլահ Ալի Խամենեին ընդգծեց, որ ԱՄՆ-ի ու մասնավորապես ՆԱՏՕ-ի վերաբերյալ մեղադրանքները հիմք ընդունելով՝ Իրանը չէր կարող համաձայնել առաջարկվող ոչ մի օժանդակության: Երկրում մեծ թափով վերելք ապրեցին «ընդդեմ բժշկական դիմակների» և «ընդդեմ ինքնամեկուսացման (կարանտինի)» կազմակերպված խմբերը, որոնք բարձրաձայնում էին նշված միջոցների արդյունավետության գիտականորեն ապացուցված չլինելը:

Տեխնոլոգիաների զարգացման գերարագության ժամանակներում ՆԱՏՕ-ն հստակ գիտակցում է այն վտանգները, որոնց առջև անխուսափելիորեն կանգնելու է նաև ինքը: ՆԱՏՕ-ի վարած միջազգային քաղաքականության շրջանակում առանցքային է «կիբեռանվտանգության ու պաշտպանության» հայեցակարգը: Դա են փաստում 2016 թ. անդամ պետությունների՝ ՆԱՏՕ-ի պաշտպանողական մանդատի վերահաստատումը և կիբեռտարածքի ճանաչումը որպես առաջնային, որտեղ ՆԱՏՕ-ն պետք է գործի և պաշտպանվի այնքան արդյունավետորեն, որքան դա անում է օդում, ջրում և ցամաքում¹⁴:

Մրան հաջորդել է ՆԱՏՕ-ի անդամ պետությունների «Կիբեռպաշտպանության պարտավորության» (Cyber Defence Pledge) հաստատումը, որը վերստին հավաստիացրել է ՆԱՏՕ-ի համար կիբեռանվտանգության ու պաշտպանության հայեցակարգի կարևորությունը¹⁵:

¹² Տե՛ս https://www.nato.int/nato_static_fl2014/assets/pdf/2020/4/pdf/2004-Factsheet-Russia-Myths-COVID-19_en.pdf

¹³ Տե՛ս <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/question-and-answers-hub/q-a-detail/coronavirus-disease-covid-19>

¹⁴ Տե՛ս https://www.nato.int/cps/en/natohq/topics_78170.htm (վերջին մուտք՝ 05.09.2021):

¹⁵ Տե՛ս https://www.nato.int/cps/su/natohq/official_texts_133177.htm (վերջին մուտք՝ 05.09.2021):

Նույն թվականի փետրվարին ՆԱՏՕ-ն ընդլայնել է փոխգործակցությունը Եվրամիության հետ հիմնականում կիբեռանվտանգության և տեղեկատվության փոխանակման շրջանակում¹⁶:

Համավարակով պայմանավորված իրավիճակը նորովի իմաստավորեց ՆԱՏՕ-ի շահագրգռվածությունը հիմնախնդրի առնչությամբ. ՆԱՏՕ-ն կիբեռտարածքը սկսեց դիտարկել ոչ միայն գլոբալ մարտահրավեր և սպառնալիք համաշխարհային անվտանգությանը, այլև սեփական դիրքերը միջազգային հարթակում թուլացնող և կառույցի նպատակները կյանքի կոչելը խոչընդոտող իրականություն:

Առանձնակի ուշադրության է արժանի «Համաշխարհային և տարածաշրջանային ուսումնասիրությունների գերմանական ինստիտուտում» (GIGA) ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յ. Ստոլտենբերգի ելույթը՝ նվիրված ՆԱՏՕ-ի հետագա ընդլայնման և ռազմական-քաղաքական զարգացման գործընթացին կամ «ՆԱՏՕ-2030» ձևաչափին (#NATO2030): Ստոլտենբերգի խոսքերով՝ աշխարհը փոխվում է, ՆԱՏՕ-ն ևս շարունակելու է փոխվել, իսկ այն հարցին, թե ինչպես է տեսնում Դաշինքը տասը տարի անց, նա պատասխանել է՝ առավել գլոբալ: Հետաքրքրական են ելույթի երեք կարևոր դրույթները, որոնք, ըստ Ստոլտենբերգի, «առավել գլոբալ լինելու» ճանապարհին դարձել են ՆԱՏՕ-ի քաղաքականության հիմնական թիրախները՝ Քովիդ-19, ահաբեկչություն և Չինաստան:

Չինաստան: Չինաստանի առնչությամբ ՆԱՏՕ-ն կրկին վերահաստատում է, որ կողմերը միմյանց հակադիր, առավել ևս թշնամական չեն տրամադրված, սակայն միևնույն ժամանակ պետք է հստակ գիտակցել, թե ինչ է նշանակում Չինաստանի վերելքը ՆԱՏՕ-ի և համաշխարհային անվտանգության համար: Ընդգծվում է, որ Չինաստանը չի կիսում ժողովրդավարության, օրենքի և մարդու իրավունքների գերակայության և ազատության արժեքները. Չինաստանին մեղադրում են ավտորիտար լինելու համար և՛ իր ժողովրդի նկատմամբ, և՛ միջպետական հարաբերություններում: Ամերիկյան նախկին դիվանագետ Ու. Միտչելի խոսքերով, եթե Ռուսաստանը ՆԱՏՕ-ի համար հիմնական ռազմական սպառնալիք է, ապա ուժեղացող Չինաստանը մեծագույն սպառնալիք է¹⁷:

Հստակ նկատելի է, որ առաջատար շատ տնտեսությունների ու քաղաքականությունների մրցակցությունից Չինաստանի ներուժը դուրս թողնելու քայլերը ցանկացած դեպքում պետք է հանդիպեին ուժեղ դիմադրության: Միևնույն ժամանակ առավել քան կանխատեսելի էր, որ Չինաստանը, քաջ գիտակցելով միջազգային ծանրակշիռ դերակատարների վերաբերմունքն իր հանդեպ, պետք է նախապատրաստվեր արդյունավետ պաշտպանության: Միջազգային ուժային դասավոր-

¹⁶ Տե՛ս <https://cco.ndu.edu/PRISM/PRISM-Volume-6-no-2/Article/840755/european-union-and-nato-global-cybersecurity-challenges-a-way-forward/> (վերջին մուտք՝ 05.09.2021):

¹⁷ Տե՛ս <https://www.dw.com/en/china-nato-relations/a-55862049> (վերջին մուտք՝ 05.09.2021):

րության կամ վերադասավորության նմանօրինակ պատկերը թույլ է տալիս ենթադրել, թե որտեղ են ձգվում համաշխարհային ապատեղեկատվության՝ որպես կիրառական տեղեկատվական նորագույն գործիքի տարածման արմատները: Այս համատեքստում շատ տեսաբաններ պնդում են, որ իրականում հենց Չինաստանին է պատկանում կորոնավիրուսի ծագումնաբանության մասին ապատեղեկատվության տարածման «մենաշնորհը»:

ԷյՓի պարբերականի (AP Investigation) և Ատլանտյան խորհրդի թվային հետախուզական լաբորատորիայի (Atlantic Council's Digital Forensic Research Lab) համագործակցությամբ հրապարակվեցին փաստական նյութեր, որոնք Չինաստանին մեղադրում էին կորոնավիրուսի մասին համաշխարհային ապատեղեկատվության արշավ նախաձեռնելու համար: Ի հավելումն նշվում էր, որ այդ ճանապարհին Չինաստանը օգտագործում է իր ակտիվ ու ազդեցիկ ներկայությունը արևմտյան մեդիա դաշտում¹⁸:

Կենտրոնական Չինաստանում կորոնավիրուսի տարածումից երեք ամիս անց՝ արդեն 2020 թ. մարտին, ակտիվ շրջանավեցին լուրեր, թե վիրուսը մարդածին է՝ ստեղծված լաբորատորիաներում: Դրան ի պատասխան՝ Չինաստանի արտաքին գործերի նախարարությունը բազմիցս պաշտոնապես դատապարտեց Չինաստանին հասցեագրվող մեղադրանքները՝ կրկին վերահաստատելով իր պատրաստականությունը համագործակցելու համաշխարհային ուժերի հետ ապատեղեկատվության դեմ պայքարում: Ի հավելումն՝ Չինաստանը մշտապես ընդգծում էր համավարակը համառորեն քաղաքականացնել ձգտող թշնամական ուժերի ագրեսիայից պաշտպանվելու իր կարողությունը:

Չինաստանի հակաարձագանքը հնչող մեղադրանքներին չուշացավ այլ ձևաչափով ևս: Մասնավորապես, համացանցում արագորեն տարածվեց և զգալի դիտումներ հավաքեց մի մոնդոլի տեսաուղերձը, որը հայտարարեց, որ կորոնավիրուսը ստեղծել է ԱՄՆ-ն: Կարճ ժամանակ անց այդ նույն տեսաուղերձն ակտիվորեն սկսվեց տարածվել չինական Kuaishou հավելվածում և մեծ արձագանք գտավ Չինաստանում, ինչը տեղիք տվեց ենթադրության, որ դա պետական պատվեր էր¹⁹:

Չինաստանին է վերագրվում այն միջը, որի համաձայն՝ կորոնավիրուսը Վուհան է բերել ամերիկացի մի զինվորական, որը Չինաստան էր այցելել 2019 թ. հոկտեմբերին «Աշխարհի ռազմական խաղերին» մասնակցելու համար: Այս վարկածին հղում տվեց անգամ Չինաստանի արտաքին գործերի նախարար Զաո Լիջիանը՝ համացան-

¹⁸ Տե՛ս <https://apnews.com/article/donald-trump-health-media-social-media-coronavirus-pandemic-4531cddae4228b86e897aa029fb07231> (վերջին մուտք՝ 05.09.2021):

¹⁹ Տե՛ս <https://apnews.com/article/pandemics-beijing-only-on-ap-epidemics-media122b73c134b780919cc1808f3f6f16e8> (վերջին մուտք՝ 05.09.2021):

ցում արձագանքելով Մոնրեալում հրապարակվող մի պարբերականի լրատվությանը. վերջինս հայտնի է պրոռուսական տեղեկատվության տարածմամբ և համանման միջերի ակտիվ շրջանառմամբ²⁰:

Եվրոպական փորձագետների պնդմամբ՝ Oriental Review հայտնի պարբերականը, որը համարվում է «պաշտոնական Կրեմլին մոտ կանգնած տեղեկատվական հարթակ», պարբերաբար ծավալում է քննարկումներ և տարածում ուղղորդված տեղեկատվություն կորոնավիրուսի ծագումնաբանությանն առնչվող դավադրության տեսությունների մասին, որոնց սկզբնաղբյուրը Չինաստանում է: Օրինակներից մեկը կասկածն է, թե իբր կորոնավիրուսը ստեղծվել է լաբորատորիայում, որտեղ դա փորձարկվում էր չղջիկների վրա, կամ աշխատակիցը փորձերի ժամանակ վարակվել է և վարակն արտաքին միջավայր դուրս բերել²¹: Հետաքրքրական է, որ լաբորատորիաների պատկանելության հարցը գրեթե միշտ շրջանցվում էր:

Նույն ժամանակ ռուսական REN TV-ին, որը Կրեմլին մոտ գործարար մի խմբի է պատկանում, տարածեց հայտարարություն, որ կորոնավիրուսը ստեղծվել է ամերիկյան օժանդակությամբ Վրաստանում հիմնադրված Հանրային առողջության հետազոտական կենտրոնում (Լուգար)²²: Լրատվության տարածումից անմիջապես հետո կենտրոնի տնօրեն Պ. Իմնաձեն հերքեց այն: Հայաստանում ևս ստեղծվեց նման իրավիճակ՝ կապված ամերիկյան ֆինանսավորմամբ աշխատող լաբորատորիաների հետ: Դեռ 2016-ից՝ լաբորատորիաների գործարկումից ի վեր, դրանց վերագրվում էին կենսաբանական գենքերի փորձարկումներ: Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված իրավիճակը ավելի սրեց քարոզչությունը, և ռուսական մամուլն ու դրանց վստահելի հայկական աղբյուրները ակտիվորեն տարածում էին ռուսչինական պատումները առ այն, որ վարակն արհեստականորեն ստեղծվել է ԱՄՆ-ում²³:

Ավելին, երկու չինացի գիտնական համահեղինակեցին «գիտական վերլուծություն», որտեղ ներկայացվում է կորոնավիրուսի հնարավոր արհեստածին ծագումը Վուհանի հիվանդությունների վերահսկման ու կանխարգելման կենտրոնում (հոդվածն արդեն ջնջված է)²⁴:

Ի պատասխան այսօրինակ տեսությունների՝ հանրային առողջապահության 27 փորձագետներից բաղկացած գիտահետազոտական

²⁰ Տե՛ս <https://www.theglobeandmail.com/world/article-for-china-and-russia-coronavirus-hoaxes-are-another-strain-of/> (վերջին մուտք՝ 05.09.2021):

²¹ Տե՛ս <https://orientalreview.org/2020/03/02/the-viral-blame-game-xenophobia-attribution-and-coronavirus/> (վերջին մուտք՝ 05.09.2021):

²² Տե՛ս <https://www.theglobeandmail.com/world/article-for-china-and-russia-coronavirus-hoaxes-are-another-strain-of/> (վերջին մուտք՝ 05.09.2021):

²³ Տե՛ս Grigoryan A., (2020), Disinformation and Other Tools of Antidemocratic Influence: An Armenian Outlook in the EU and Eastern Partnership Context, EaP Monthly Bulletin. https://centreforpolycystudies.org/gallery/CPS_EaP_bulletin2.pdf

²⁴ Տե՛ս <https://twitter.com/OSINTHK/status/1228664201452765185>(վերջին մուտք՝ 09.09.2021):

խումբը աշխատանքներ սկսեց համավարակի շուրջ հյուսված «գիտական» միջերի հերքման ուղղությամբ²⁵: Lancet պարբերականում լույս տեսավ նրանց համատեղ հայտարարությունը՝ հաջակցություն Չինաստանում համավարակի դեմ պայքարող բուժաշխատողների²⁶: Ըստ դրա՝ դավադրապաշտական տեսությունները ոչ այլ ինչ են, քան վախ, անվստահություն, ասեկոսներ, նախապաշարմունքներ և ատելություն տարածելու միջոցներ:

Մեկ այլ տեսության համաձայն՝ Վուհանի վիրուսաբանության ինստիտուտում աշխատակիցներից մեկը դուրս է հանել վիրուսը արտաքին աշխարհի ամերիկյան զինվորականների պատվերով: Մա դավադրություն է՝ ի պատասխան չինական լաբորատորիաների գաղտնի գործարկման²⁷:

Ռուսաստան: Ռուս ազգայնական, փիլիսոփա և ուղղափառ եկեղեցու մոլի հետևորդ Ա. Դուգինն իր հերթին կորոնավիրուսը մեկնաբանում է կրոնական և պրոռուսական դիրքերից: Ըստ նրա՝ համավարակը վերջ կդնի գլոբալիզացիային և կշրջի լիբերալիզմի պատմության վերջին էջը: Նույն ուղերձում նա նաև կոչ է արել դատապարտել Ջ. Մորոսին: Դուգինը պնդում է, որ համավարակը չունի որևէ տրամաբանություն և չի ճանաչում ո՛չ հարուստ, ո՛չ աղքատ, ուստի այն «բիրլիական ժանտախտի» մարմնացումն է: Ըստ նրա՝ այն եկել է, որ մարդկանց վերադարձնի պարզ կեցության գիտակցումը²⁸:

Ռուսաստանի վարած քաղաքականությանն են վերագրվում դավադրության այնպիսի տեսություններ, որոնցից են «կորոնավիրուսի խաբեություն և նախապես ծրագրված սցենար լինելը»․ հիմնական նպատակներից են դեղորայքի ու բժշկական ապրանքների գերվաճառքը և դրանով հետաքրքրված մի շարք արևմտյան կազմակերպությունների հարստացումը: Մասնավորապես խոսվում է դեղագործական խոշոր ընկերությունների ու «Բիլ և Մեյնդա Գեյթս հիմնադրամի» մասին որպես կորոնավիրուսը նախագծող մարմինների²⁹:

Իսկ 5G կապ ապահովող աշտարակների վնասումը սկիզբ դրեց մեկ այլ տեսության, այն է՝ արևմտյան էլիտան նպատակ ունի վերահսկել բնակչությանը 5G ցանցերի միջոցով, որոնք էլ հենց տարածում են վարակը: Այս վարկածն ամրապնդելու եկան արդեն թեստավորման և պատվաստանյութերի մասին վաղ և չհիմնավորված պնդումներն առ

²⁵ Տե՛ս <https://www.sciencemag.org/news/2020/02/scientists-strongly-condemn-rumors-and-conspiracy-theories-about-origin-coronavirus> (վերջին մուտք՝ 09.09.2021):

²⁶ Տե՛ս [https://www.thelancet.com/journals/lancet/article/PIIS0140-6736\(20\)30418-9/fulltext](https://www.thelancet.com/journals/lancet/article/PIIS0140-6736(20)30418-9/fulltext) (վերջին մուտք՝ 09.09.2021):

²⁷ Տե՛ս <https://euvsdisinfo.eu/report/us-military-might-have-released-the-coronavirus-to-challenge-china/> (վերջին մուտք՝ 09.09.2021):

²⁸ Տե՛ս <https://www.geopolitica.ru/en/article/plague-gods-geopolitics-epidemic-and-bubbles-nothing> (վերջին մուտք՝ 09.09.2021):

²⁹ Տե՛ս <https://euvsdisinfo.eu/capitalising-on-the-coronavirus-onspiracist-frenzy/> (վերջին մուտք՝ 09.09.2021):

այն, որ դրանք մարդկանց չի պավորման համար են արվելու³⁰:

Ռուսաստանը բազմիցս դատապարտել է իր դեմ հնչող մեղադրանքները: ՌԴ արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Մ. Չախարովան պաշտոնապես դատապարտեց The New York Times-ի և The Financial Times-ի «Ֆեյք լրատվության զանգվածային քարոզչությունը», որի նպատակն է «համաշխարհային ճգնաժամն օգտագործել կառավարություններ վարկաբեկելու և տարածաշրջաններ ապակայունացնելու համար»³¹:

Արևմտյան վերլուծաբանների կարծիքով՝ միջազգային ապատեղեկատվության տարածման ժամանակակից գործիքակազմը Ռուսաստանի պարագայում հիմնականում ամբողջացված է պետական RT և Sputnik լրատվական հարթակների գործունեության մեջ:

RT-ն 6 լեզուներով հեռարձակվող 8 հեռուստատեսային ալիքների ցանց է, որի դիտումները Յություբում հասնում են միլիարդների: Մինչդեռ Sputnik-ն առցանց լրատվական է, որը ներկայացված է բազմաթիվ երկրներում՝ 30 լեզուներով³²: Յ. Պրիգոժինի ղեկավարած «Բնտերնետ վերլուծությունների գործակալությունը» ևս համարվում է ռուսական պաշտոնական ապատեղեկատվության տարածման հարթակ³³:

Ներկայումս շատ են արևմտյան վերլուծությունները պաշտոնական Կրեմլի՝ ապատեղեկատվության տարածման արշավում վերը նշված երեք մեդիա հարթակների ակտիվ ներգրավվածության մասին, և դրանք թույլ են տալիս այլ դիտանկյունից նայել Ռուսաստանի քաղաքական օրակարգին և վարած միջպետական քաղաքականության առաջնահերթություններին:

Ցանկացած դեպքում կարելի է համաձայնել, որ, ինչպես նշում է անգլիացի մեդիափորձագետ, կեղծ լուրերի հետազոտող Բ. Նիմոն, Ռուսաստանը կորոնավիրուսը օգտագործում է իրեն բնորոշ հակաարևմտյան կեցվածքը հերթական անգամ ի ցույց դնելու համար³⁴:

Առհասարակ, համավարակի բռնկումից ի վեր, Ռուսաստանը լայնորեն օգտագործել է մեդիան՝ համավարակի դեմ իր պայքարը ներկայացնելու համար: Հումանիտար աջակցությունը և պետական օժանդակության ծրագրերը, որոնք հիմնականում իրականացվում էին Իտալիայում, արևմտյան շրջանակներում ոչ միանշանակ էին ընկալվում³⁵: Մասնավորապես, «Միքով՝ Ռուսաստանից» խորագրով 2020 թ. մար-

